

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ *

ԵՐԿԴԻՄՈՒԹԻՒՆ ՉԵՆՔ ՈՒՉԵՐ

Միանգամ ընդ միշտ կը յայտարարենք կուսակցականներուն, չէզոքներուն, անտարբերներուն, միութենականներուն, եւ ո՛չ—միութենականներուն թէ Հնչակեան Կուսակցութիւնը փափաքող է ճշմարիտ ու եղբայրական միութեան մը:

Պայմանաւոր ու բանադատեալ միութիւնը անկարելի է ունորանոր երկպառակութիւններու, նորանոր բաժանումներու պատճառ կը դառնայ: Միութիւնը որպէս զի իրական, տեւական ու արգաւանդ ըլլայ՝ պէտք է որ կատարուի անկեղծօրէն, անշահախնդրօրէն, եղբայրօրէն, ԱՌԱՅՑ ՊԱՅՄԱՆԻ, այլ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԷՆ ՀԱՄԱՀԱՒՊՍԱՐ ՉՈՒՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ:

Երկդիմութիւն չե՛նք ուզեր:

Եւ որպէս զի մեր խօսքերը, ինչպէս սովորութիւն է, սխալ չմեկնուին ու անոնց իմաստն ու ոգին չխեղաթիւրուին, թո՛ղ Հայ Ժողովուրդը զիտնայ թէ Հնչակեան Կուսակցութիւնը պատրաստ է ո՛ր է զօհադութեան առջև շնորհիկ: Օրինակի համար՝

1. Չեզել « Հնչակեան Կուսակցութեան » անուանը:
2. Դադրեցնել իր պաշտօնական հրատարակչութիւնները:
3. Կեդրոնական Վարչութեանը պատրաստ է անբողջապէս հրաժարիլ:
4. Պատուոյ խօսք կեդր. Վարչութեան կողմէ արագայ միացեալ մարմնին վարչութեանը մէջ ու եւս է պաշտօն չստանձնելու:

Յ. Եթէ կան դեռ մեծ ու փոքր զոհողութիւններ, որոնք կը վրիպին մեր յիշողութեան, կանխաշինողութիւնը զանազայ:

ԵՐԿԴԻՄՈՒԹԻՒՆ ՉԵՆՔ ՈՒՉԵՐ:

Կը կրկնենք,

Միութիւնը որպէս զի իրական, տեւական ու արգաւանդ ըլլայ, պէտք է որ կատարուի անկեղծօրէն, անշահախնդրօրէն, եղբայրօրէն, ԱՌԱՅՑ ՊԱՅՄԱՆԻ, այլ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԷՆ ՀԱՄԱՀԱՒՊՍԱՐ ԵՒ ԱՆՍՈՒՄԱՐ ՉՈՒՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ:

ԿԵՐՈՆՈՎԱԾՆ ՎՈՐՉՈՒԹԻՒՆ
ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

(*) Տե՛ս Նոր Կեանք թիւ 15:

ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՈՐ

1894ի կարմիր հետքերը շարունակած, Արեւն պահած մըն ալ կը վազէ Սասնոյ լեռներն ի վար: Նոր Կեանքի նախորդ թիւին մէջ հրատարակեցինք տագնապիչ լուրը, որ Հնչակեան Կուսակցութիւնը մղեց եւրոպական պետութիւններուն ուշադրութիւնը հրաւիրելու Սասնոյ վիճակին վրայ: Հազիւ քանի մը օր անցած՝ հեռագիրները գումեցնոն ամբողջ աշխարհի վախճում ու անձկութեամբ սպասում աղէտքը:

Սասնոյ սոսիս կոտորածը, որ Հայկական Խնդրոյ դիւանագիտական նուիրազորութիւնը պատճառ եղաւ, կսկիծի ու սուգի ընդհանուր համակուծին հետ, Հայրենիքին վերածնութեան միամիտ ու ամենի ակնկալութիւնը արթնցուցած էր բոլոր Հայ սրտերուն մէջ: Հայրութիւնը՝ արիւնով շարունակած՝ տեսակ մը եղբրական հաբօսանքի կը պատրաստուէր կարծես: Հայաստանը փրկութեան նախնութիւնը հասնէր էր, ու Հայը ա՛յլ պիտի չտառապէր թրջական անարգ լուծին տակ:— Այս էր առ հասարակ այդ պահուն տիրող տպաւորութիւնը:

Ի՞նչ բրած էր սակայն Հայ Ժողովուրդը այսքան դիւրին ազատագրութեան մը յաւակնելու համար: Մտածած էր արգօք, որ՝ եթէ ազատութիւնը այսքան հեշտին ձեռք կը ձգուէր՝ ի՞նչու ինք, անհուն զարբրէ ի վեր, հնազանդ, կեղեցուած, անպատուուած ու ոտորուկ Հայը մնացեր էր: Միտքէն իսկ անցնող գոնէ՝ ազատութեան նախաձեռնողը երգած միջոցին՝ որ ինք ալ բաժին մը ունէր բերելիք Սասնոցիին դիւցազնական ըմբոստացումը արդիւնաւոր ընելու համար:— Բացարձակապէս ո՛չ:

Հայ Ժողովուրդը՝ երբ Ազատութեան սեղանը նստելու համար թեւերը կը ստաթէր՝ պարտաճանաչութեան վարկեան մը չէր ունեցած գայն վայելիլէ առաջ, իրմէ բան մը գոհելու անոր: Սարկութեան ու Ազատութեան մէջ բացուած վիթխարի անգունը շտեպս: Հայը ու կարծեց թէ լքուած ու հեռաւոր եղբայրներու արիւնը պիտի ապահով կամուրջը ըլլար իրեն անցնելու անխուսափելի անջրպետը: Յուսեղրեցաւ, փափաքեցաւ ու սպասեց, ու այսչափ բաւական կարծեց հասնելու համար:

մարդու է՛ն բնական, է՛ն թանկագին ու է՛ն դժուար տիրացուող իրաւունքին:

Բայց ստրկութեան մէջ անասնացած Հայը ինչպէս ասանկ չմտածէր, ինչպէս այսչափ դիւրին չի նկատէր իր փրկութիւնը եւ մանաւանդ ինչպէս՝ առանց իր կողմէն ճիշդ մը ու գոհարութեան՝ ձեռնածալ չի նստէր Համակերպութեան պատուհանին առջեւ: Ազատութեան արշալուիսին սպասելու: Չէ՞ մի որ հրաշք մը խոտտացեր էին իրեն, չէ՞ մի որ իր երէկուան կոտորելը, իր առաջնորդները ամէն առիթ չէին փակցուցեր զինքը համոզելու, իրեն պոսալու թէ քրիստոնեայ վեց Պետութիւններ լեռան պէս կեցեր էին իրեն պաշտպան ու առաջին պատեհութեամբ Թիւրքին վրայ պիտի իյնային ու Հայաստանը շղթայազերծ պիտի ընէին: Ինչպէս ասանկ չի մտածէր Հայ ստրուկը: Չէ՞ մի որ Հայ ազգին ու Հայկական Դատին ներկայացուցիչները, իրենց խաչերով ու իրենց ճառերովը, քաղաքական զահլիճներու հետ իրենց ունեցած յարաբերութիւններովը, պիտի կրնային՝ ի հարկին՝ քրիստոնեայ ու թշուառ Հայաստանի վրայ քրիստոնեայ հզօր Պետութիւններու բանակները տեղացնել: Չէ՞ մի որ Հայ «ազգասեր»ները Հայ մեծ ու փոքր «բոլիթիքոս»ները ժողովուրդին պարսպ ուղեղը ու աւելի պարսպ հոյին լեցուցած էին ստարէն սպասելու իր փրկութիւնը: Չէ՞ մի որ ասոնք քարոզած էին անդադար թէ Եւրոպան պիտի գար զինքը ազատելու: Աւ վերջապէս չէ՞ մի որ Հայ ժողովուրդին կուռքերը, Հայ «հայրենասէրները» ու Ազգային Դատին մեծանուն ներկայացուցիչները ինքնապատահութեան ու ինքնապաշտպանութեան բառն իսկ արտասանած ու ասոնց տիրական ու անհրաժեշտ պէտքը ճանչցուցած չէին իրեն:

Հայ ժողովուրդը յեղափոխական բրբաղականաէն առաջ, ընդվզումի շարժումներէն առաջ, իմացած էր երբէք, որ իր փրկութիւնը իրմէն միայն կախում ունէր, ըսած էին իրեն երբէք թէ ամէն բանէ առաջ, ամէն բանէ աւելի Հայը պէտք էր ինք իր վրայ վստահէր, իր սեփական ումին կոթներ, եւ՝ եթէ կը պակսէր իրեն այդ ուժը՝ ըսած էին իրեն թէ՛ փրկութեան երգեր հնչեցնելէ առաջ՝ զայն գոյացնելու, ստեղծելու համար պէտք էր տալ, նուիրել, զահել գիտնար: — Ո՛չ, հազար անգամ ո՛չ:

Հայ ժողովուրդին պատմած էին Բոյնբերու, Պուլկարներու ազատագրումին համար եւրոպական պետութեանց միջամտութիւնը: Բայց ըսած էին իրեն թէ այդ միջամտութիւնը հետեանքն էր ապատարութեան մը, թէ այդ միջամտութեանէն առաջ, Յոյնը, Պուլկարը իրենց քսակը, իրենց աբիւնը, իրենց խելքը անխնայ նուիրած էին Հայրենիքի փրկութեան գործին, ըսած էին իրեն թէ այդ ստրուկ ցեղերը էտու՛ծ էին ու կոխով արժանացած ազատութեան բարիքներուն:

Եւ ի՛նչու պարմանալ, երբ այս կերպով առաջնորդուած

Հայ ժողովուրդը՝ Կոնիւն պատրաստութեան համար ու Կոնիւի միջոցին՝ իր ձեռքը, հօպին ու կուրծքը ժլատօրէն գոցեց ու տափակցաւ, ինկաւ, մինչեւ կոկորդը վատութեան մէջ թաթխուեցաւ:

Ի՛նչ կը սպասէիք ժողովուրդէ մը, որուն հոգեւոր ու աշխարհական առաջնորդները, մինչեւ վերջը, հնազանդութիւն քարոզած, նուառացումի ու անպատուութեան առջեւ ստրուկ ու գեղնամած համակերպութիւն յանձնարարած ին իրեն:

— Անիկա թիւրք է, տղ ս՛ս, կրնա՛յ զարնել... մենք իրաւունք չունինք գտնելու... անիկա ի՛նչ որ ընէ մենք ձայն հանելու չենք... ամենքս մէկէն կոտորէ նէ ի՛նչ կրնանք ընել...:

Այս բոլորը սակայն կը բացատրուի՝ աստիճան մը՝ այդ երէկուան շրջանին համար:

Հայ ժողովուրդին ամօթալի ու ըմբոստացուցիչ անտարբերութիւնը բացատրութիւն չի՛ վերցնէր այն օրէն ի վեր, ուր Յեղափոխութեան շեփօրը հնչեց Հայութեան ականջին, երբ Հայ Յեղափոխութիւնը իր առաջին նահաաակները ունեցաւ թիւրք բռնապետութեան մայրաքաղաքին մէջ իսկ, երբ, առաջին անգամ, արիւնը յորդեց Սասնոյ մէջ: Հայ ժողովուրդին վատ անպարտածանաչութիւնը ա՛լ չըմեղանք չի՛ վերցնէր այն օրէն ի վեր, ուր Արիւնը տարածուեցաւ ու ողորդեց ամբողջ Հայաստանը եւ երբ Եւրոպայի գարշելի ընթացքը մարդկութեան խղճմտանքը պայթակեցուց: Հայ ժողովուրդին ինքնապաշտպանութեան վայրագ չկամութիւնը ա՛լ չարդարացուիր, այն օրէն ի վեր, ուր Ստարին պաշտպանութեանը վրայ իր կառուցած հաւատի խախուտ ու ահազին շէնքը հիմնայատակ կործանեցաւ:

Ա՛լ ասոն է վերջապէս, որ ամէն Հայ համոզութեւ ողբուկածը անօգուտ է, թէ ազգային մահու եւ կենաց այս ճգնաժամին վեր մը ունի ինքը կատարելիք, թէ անիմատո բան մըն է այլ եւս չէզօք հաշակուիլը: Թո՛ղ Հայ մը մտքէն չանցնէ, որ չէզօքութիւնը պատասխանատուութիւնէ զերծ մեալ կը նշանակէ: Ընդհակառակը, ո՛ր եւ է պատրուակի տակ, ազգային ազատագրութեան Գործին ո՛ր եւ է եղանակով շմանակցող Հայուն պատասխանատուութիւնը անհունօրէն աւելի մեծ ու ծանր է քան ազատութեան համար կառուցներու կարծեցեալ պատասխանատուութիւնը, ի՛նչ որ ալ ըլլայ կոնիւն վատեանը: Չէզօք հայերը պէտք է միանգամ ընդ միշտ ըմբռնեն, որ յեղափոխականները, այսինքն ազգային փրկութեան մաքառումին կամովին նուիրուած իրենց եղբայրները, հակառակ ամէն տեսակ գժուարութիւններու, հակառակ ամէն չկամութիւններու եւ վատութիւններու, սկսուած Գործին մինչեւ ծայրը պիտի երթան: Ստրուկ ամբոխներու — իրենց ազատագրումին համար իսկ եղած ջանքերուն առջեւ — անասնական անտարբերութիւնը չի պիտի կրնայ կասեցնել մեզի:

Հայ ժողովուրդին ստրկութեան տղմուտին մէջ թխմուած

Մնալու յամսուութիւնը չպիտի կրնայ՝ բռնակալութեան ուխտուած թշնամի՝ Հայ յեղափոխականները յուսահա- անցնել: Ընդհակառակը:

Եւ արդէն ուրիշ միջոց, ուրիշ ելք չունի Հայ ժո- ղովորդը: Փախուստի բոլոր դոճերը գոցուած են իր առ- ջեւ: Կացութիւնը այնքան պարզ է հիմա, որ ա՛յ նե- րելի չէ ո՛ր է վարանում: Մեր թշնամին վճռած է ու կը գործադրէ մեր ազգային բնաջնջումը: Այո տեսակ վիճակի մը մէջ հասաչանքը անօգուտ՝ ոչխարի պէս մորթուիլը անպատուութիւն, երկչոտութիւնն ու անապ- բերութիւնը վատութիւն է: Ինքնապաշտպանութիւնը մի- ակ ճամբան է որ կը մնայ մեր առջին: Հայ ժողովորդը պէտք է վերջապէս ճանչնայ այս իրականութիւնը ու միտքէն չանցնէ այլ ևս, որ բռնութեան առջեւ երկրը պազութիւն, գետնաքարչ համակերպութիւն, հաւատար- մութեան երզում կամ դաւաճան զիջումներ պիտի կրնան ազգային մահացումին առաջըր առնել:

Հայ ժողովորդը այն ատեն միայն իրաւունք պիտի ունենայ ազատութեան սպասելու, երբ ինք իր վրայ վստահիլ սորվի, ինքնապաշտպանութեան գաղափարին պլլուի, իր գոյութեան բովանդակ թափովը, երբ ֆիւրտը կամ թիւրքը իր գլխուն զարնեն, փոխանակ դահիճին անկարելի զթութեանը ապաւինելու և փոխանակ անձ- կագին ակնարկներով հեռաւոր հորիզոններէ, անձանթ ազատարարներ սրտնելու՝ հոգիով մարմնով զէնքի մը կառչած՝ իր կեանքին և իր պատիւին ապահովութիւնը անոր մէջ միայն փնտռել գիտնայ:

Հայաստանի մեծ Արիւնահեղութիւնէն ետքը, հայ լեռները լեցուելու էին հայ հրոսակախուսներով: Կեղե- քումներէ, հալածանքէ և անօթութենէ օտարուած Հայ երիտասարդները՝ փոխանակ իրենց երկիրը ձգել և օտար աշխարհներու մէջ փճացումի ու մուրալու դատապար- տուելու՝ լեռը ելլելու, լեռը բնակելու ու ինքզինքնին լե- ոան տէրը հոշակելու էին, այն լեռներուն, որոնց կիր- ճերն ու անձանքը իրենց պղծուած քոյրերուն վրէժի ազատակները կ'արձագանքէին:

Երբ մենք քանի մը դառն ու անտեսուած ճշմար- տութիւններ Հայ ժողովորդին երեսն ի վեր կը նետենք, կը գտնուին մարդիկներ, որոնք՝ մեր օրտրաց, անկեղծ, գիտակից ու համոզուած խօսքերէն անուում՝ ձրի նա- խաախնքներ կ'ուզեն տեսնել անոնց մէջ այս ու այն գառակարգներու հասցէին, ու կը փութան անոնց պաշտ- պան հանդիսանալ, վերատր ու անխոստովանելի դի- րազգածութիւններու համակրութիւնը որօալ աճապարելով իրենց մասնակի ու շահախնդիր ձեռնարկներուն:

Այս էջերուն մէջ ինչ որ կը զրենք մենք, «գաօա- կարգային» մտահոգութիւններէ թելադրուած չենք ընել ատիկա: Ո՛վ որ ժողովորդին հոգին սարկութեան մէջ պահելու, անոր վատութեան եւ անպարտաճանաչութեան

հակումները քաջալերելու ու յեղափոխական լ հաւատքը անոր մէջ քանդելու կը նկրտի՝ մեր հակառակորդն է, Ազատութեան թշնամին է, Բռնակալութեան գիտակից կամ անգիտակից մեղօակիցը: Եւ մենք այդ կարգի հա- յերը, ըլլա՛ն հարուստ, եկեղեցական կամ մատուրական, անինայ պիտի հալածենք, որովհետեւ Յեղափոխութեան ղէմ դաւաճաններ ու ժողովորդին սարկական աքիւնը շահագործողներ կը նկատենք զանոնք:

Մենք չենք կրնար շոյել հարուստի մը եղեռնական անպարտաճանաչութիւնը, եկեղեցականի մը մատու- թիւնը ու ո՛ր է Հայո՛ւ՝ Յեղափոխութիւնը վարկաբեկ ը- նելու համար օտարացած մեքենայութիւնները: Անոնց ղէմ բարձրանալը մեր նուիրական պարագն է, ու մեր կողմէն լուութիւնը՝ դաւաճանութիւն մըն է մեր սկզբունքներուն ղէմ:

Մենք խորապէս համոզուած ենք, որ վատութիւնը վատութիւնով չի՛ մաքրագործուիր, ո՛չ ալ անպարտա- ճանաչութիւնը շողոքորթուելով: Դասակարգի խտրութիւն չենք ճանչնար: Ստրուկներու ժողովորդ մըն ենք: Մեր մէջ պանքեր Մկրտիչը այնքան ստրուկ է, որքան բեռնակիր Մրտօն: Պարտաճանաչ հարուստը, պարտաճանաչ եկեղեցականը, պարտաճանաչ մտաւո- րականը մենք կը յարգենք, ինչպէս կը օրերնք ու կը պաշտենք ո՛ր է անձնագոհ յեղափոխական մը:

Մեր մտածումները սխալ մեկնողներուն համար այս կէտը անցողակի շեշտելէ յետոյ, կը յայտարարենք նորէն, թէ ա՛յ չպիտի կրնանք թող տալ, որ Հայ մը, ի՛նչ «գա- օակարգի» ալ պատկանի, շարունակէ տակաւին՝ ո՛ր է միջոցաւ՝ ժողովորդին սարկական զգացումները փայ- փայել և չպիտի ներենք որ Հայ մը, ի՛նչ ձեւի տակ որ ըլլայ, ժողովորդին անգիտակցութիւնը շահագործել յանդգնի զայն Յեղափոխութենէն դարձնել նկրտելով:

ԱԶԱՏ ԽՕՍԲԵՐ

ՇՈՒԱՐԱԾՆԵՐԸ

Իրա՛ւ, հանրային ազնիւ իտէալի մը համար ոգը- թիլը իր մեծ ու փոքր անպատեհութիւններն ունի մեր մէջ, երբ համոզումով, հաւատքով ու ջերմեռանդօրէն ճամբայ կ'իջեո, երբ մանաւանդ յամառ, ինքնաւստահ ու տիրական քայլերով ու անհաշտելի ու անողոք ուղ- դամտութեամբ մը, կը զիմեօ զէպի առաջադրուած նուր-

րական նպատակը, առանց չորսից ուշադրութիւն գար-
 ձընելու, առանց այսինչին հաւանութիւնը կանխաւ առ-
 նել փութալու, այնինչին անձնասիրութիւնը վիրաւորելէ
 զգուշանալու, կամ սա միւսին անարգութեանը հաճոյա-
 կատարօրէն աչք գոցել զիջանելու: Աօրկա հարկաւօ-
 րաբար կ'արձակէ ետեւի խելայիղ ու ժողբին վօհմակը
 անոնց, որոնք իրենց հացին կամ իրենց փառասիրու-
 թեանը սպառնացող վտանգ մը կը տեսնեն այլասէր ու
 անշահախնդիր ջանքերուց մէջ ու գարշապարնեբուց կը
 հետեին ատեն մը՝ խածնելու անկարող՝ ակոսաներնին
 կրճտելով ու ոռնալով, ոռնալով, զոնէ ձայնի խափանել,
 մարել կը նկրտին: Պէտք չէ՛ այլայլիտ, պէտք չէ՛ կանգ
 առնես, պէտք չէ՛ ետից դառնաս, նոյն իսկ երբ նենգաւոր
 հարուածները փորձուին անոնց կողմէ, որոնց հաւատա-
 րիմ մտածումովը զօտէպնդուած ճամբայ ինկար: Չզէ՛
 որ հոգիդ արիւնի, մայրական կուրծքին պէս, որուն
 վրայ՝ շրթունքները փակցուցած՝ կեանքով կշտանալէ
 վերջ, վայրագ բունցք մը կ'իջեցնէ զաւակը: Ու քալէ՛,
 քալէ՛, քալէ՛, բիբերդ հորիզոնին սեեռած, միջեւ որ դադ-
 րին պիղծ ձայները ու մթնոլորտը մաքրուի, պարծա-
 ունայ ու յաղթական արշալոյսներ աւետէ:

Բայց ի՞նչ բարերար, որտապնդող ու զօրացնող վայր-
 կեան է ան, երբ՝ չկամութեան և ատելութեան խժուրեցէն
 յոգնած՝ Մաքառումին ճամբուն վրայ՝ կը զգաս, կը
 տեսնես յանկարծ, որ սարսուղին ու եղբայրական ձեռ-
 քեր քեզի կ'երկնան, ցնցուած, թունդ ելած խղճը-
 տանքներ զէպի ձայնից կը վազեն, կը հասնին ու հմայ-
 ուած, մագնիսօացած հոգիներ քեզի կուգան, կը փարին,
 հաւատքով ու վստահութեամբ ինքնամատոյց: Անոնք
 որ տարփանքով հանրային գործի մը մէջ նետուած
 ու զայն գլուխ հանելու համար զիշեր ցորեկ սիրտ ու
 միտք հատցուցած, սպասած, ոգած, յամառած, պրկուած
 չունին, անոնք որ յեղափոխական բուռն գործունէութեան
 մը կենսամաշ տենդերուն մէջ զալարուած, վատնուած
 չունին՝ անոնք չեն կրնար հարկաւ գիտնալ այդ կազ-
 դուրիչ հանդիպումներուն յարգը:

Նամակները, զորո կը ստանանք ամէն կողմէ, այս
 հազուագիւտ վայելքին հետ, կը բերեն մեզի անզուգա-
 կան ապահովութիւնը՝ թէ ամէն բան կորսուած չէ — նոյն
 իսկ արտասահմանի մէջ — և թէ ազգային այլասերումէն,
 որուն զէմ՝ ոգի ի բոին՝ կը մաքառինք, ամենքը վարակ-
 ուած չեն, ու անվթար մնացած հարազատ ու թանկա-
 գին տարրեր կան տակաւին, վերածննդեան մը կարե-
 լիութիւնը երաշխաւորելու համար:

Մտացաւ ու անխարդախ շեշտը, որ կը յատկանշէ
 այդ նամակները, տեղի չտար մեր կողմէն ո՛ր և է վերա-
 պահումի անոնց նկատմամբ: Մենք չենք նանչնար ա-
 նոնցմէ շատերուն հեղինակները, որոնք զուրօ մնացած
 են մեր յեղափոխական կարգերէն: Երբեմն ստորագրուած
 իսկ չեն անոնք, ու այս պարագան անվիճելի կ'ընէ՝ մեր

աչքին՝ անոնց բացարձակ անկեղծութիւնը ու անծա-
 նօթին վարագոյրը կը կրկնապատկէ գոհունակութիւնը
 զոր կը գտնենք այդ սրտբաց ու ինքնաբեր մերձեցում-
 ներուն մէջ:

Շահեկան պիտի ըլլար թերեւս հրատարակել այդ
 նամակները, գաղափար մը տալու համար հոգեկան վի-
 ճակին վրայ կարգ մը Հայերու, որոնք աննշան, այլ
 ընտրեալ փոքրամասնութիւն մը կը կազմեն եւ որոնք
 գործողութեան ու չէզօքութեան միջեւ կը տարուբերին,
 չուզելով յաւերժանալ ամուլ ու ամօթալի անշարժութեան
 մը մէջ ու չհամարձակելով, միևնոյն ատեն, նետուիլ,
 խառնուիլ յեղափոխական շարժումին: Մեր հասցէին
 բարեացակամ գովասանքներու ու զգուսակէն խօսքերու
 ներդրածիտ առատութիւն մը սակայն կը դուռարացնէ
 մեզի այդ նամակներուն հրատարակութիւնը: Չենք կրնար,
 այս յեղափոխական օտկանին մէջ, լրագրական ուղղամ-
 ներու զիջանիլ ո՛չ ինքզինքնուս, ո՛չ ալ ուրիշներուն հա-
 մար — օգտակար բարեկամութիւններ շահելու զգլխիչ,
 խանդաղատեցուցիչ ակնկալութեամբը:



Մեր բրօքականտին առաջին ու անմիջական մտա-
 հոգութիւնը եղաւ հո՞՛ Հայ ժողովուրդին մէջ պարտա-
 ճանաչութեան ու արժանապատուութեան զգացումները
 ու յեղափոխական գիտակցութիւնը արթնցուցած ատեն-
 նիօ՛ Յեղափոխութիւնը շահախնդիր կեղծաւորներու,
 փոքրօրի գասալիքներու, վատ չէզօքներու, եսամուլ ան-
 տարբերներու և ունայնամիտ քապօթէններու պղծումէն
 մաքրագործել, անօր հմայքը փրկել ու անձեռնմխելի
 հեղինակութիւնը ամէն գնով յարգել տալ:

Կ'երևի թէ մեր այս առաջին ջանքերը ապարդիւն չեն
 մնար, քանի որ Յեղափոխութեան ի ծնէ թշնամի ըլլալ դա-
 տապարտուած վօհմակը սկսաւ արդէն իր անկարողութիւնը
 ոռնալ մեր ետեւէն ու անկեղծներն ու գործելու որբա-
 մագիւրները, իրենց ամուլ ու տրտում մեկուսացումէն
 հետզհետէ դուրօ ելլելով, մեզի կը մօտենան վարանոտ,
 այլ ակնդէտ:

Անտարբերութեան ու չէզօքութեան գէմ մեր բուռն
 ու պատճառաբանեալ զայրոյթը ու ամբաստանող դիրքը
 ցնցած, տակնուվրայ ըրած է զիրենք: Մեր խօսքերէն
 վրդովուած՝ վեհանձն իղձահարութիւններ կը սկսին ու-
 նենալ: Չեն ուզեր աւելի երկար հանդուրժել իրենց
 ակամայ — կ'ըսեն իրե՛ք — մեկուսացումին, ա՛լ տաժանելի
 է իրենց անտարբերութեան ու անպարտաճանաչութեան
 դառն մեղադրանքներուն ենթարկուիլ: Ու կը փութան
 բացատրել մեզի իրենց պարագան, խորհուրդ կը հար-
 ցընեն մեզի ու սրտատուչ տրամադրութիւններ ցոյց կու-
 տան մեզի հետ եղբայրօրէն լծուելու միևնոյն Սայլին:
 Շուարածներն են ատոնք: Ու չենք կրնար մաօ-

նաւոր ուշադրութիւն մը չնուիրել իրենց: Անոնք մեզի հետ են արդէն օրտով, առանց մեր կարգերուն մէջ օտը կոխած, մեր ցանկերուն մէջ արձանագրուած ըլլալու: Ու անոնք՝ մինչև հիմա՝ ձեռք ձեռքի քալած պիտի ըլլային մեզի հետ, եթէ զիտցուած ըլլար՝ շուարուծի առջի օրերուն՝ ցոյց տալ անոնց Շիտակ Ճամբան: Անշուշտ առաջնորդներ՝ երբ իրենք կը շեղէին այդ ճամբէն ու քոփտի անկներու մէջ անդամ չյամեցած՝ շիփ շիտակ անկուծին զեանափորները կ'ընէին՝ չպիտի կրնային ուղղել խարխափող քայլերը շուարածներուն: Մինակ մը նացած՝ անոնք ուզեցին բան մը ընել, օգտակար ըլլալ իրենց ազգին, արտասահմանի զանազան քաղաքներու մէջ տեղական գործունէութեան տարտած ձեռնարկներու հետամտեցան: Խանդավառութիւնը առեն մը անկեց: Յետոյ, կամաց կամաց, իրենց եռանդը մարեցաւ, որտմտեցան, հանրածանօթ ըլլալու հաճոյքը արուեցաւ: Ուրիշներ ելբը էին, միևնոյն անձուկ չըլանակին մէջ, որոնք ուրիշ բան կ'ուզէին, կամ մանաւանդ չէին ուզեր որ՝ իրենցմէ զատ՝ ուրիշներ հանրային ուշադրութեան արժանանան: Ու կոհներ, ժողովներ, լղրճուկ սպրդուներ, շնական զբպարտութիւններ անօրակելի բաշտարներու կողմէ, սրոնք՝ «Արգարութիւն», «Պարտականութիւն», «Պահանջ», «Համբարաշխութիւն» զգլխիչ սրակուճներուն տակ՝ արտասահմանի Հայութիւնը կ'ամբարոյացնեն, կը պոսնկացնեն, զայն շարաթը անգամ մը, երկու անգամ, կը թունաւորեն շարունակ, չորս-հինգ տարիէ ի վեր:

Շուարածները՝ վարկաբեկուծի, չկամութեան, նենգութեան, մատնութեան արհեստաւորներուն յայտնի կամ ընդերկրեայ հայաժանքներուն ու մեքենայութիւններուն առջեւ՝ դառնացած, վհատած՝ կարծեցին, որ ա՛յ բան մը չունէին ընելիք ու քաշուեցան, մեկուսացան:

Ասիկա անիտուսափելի էր սակայն ու սոսկի պիտի ճակատագրորէն ելլէ բոլոր մասնակի գործունէութիւններուն առջեւ, անոնց ճամբան պիտի կտրէ ու զանոնք պիտի վիժեցնէ, մինչև որ ամէն հայ անհատ կամ խմբակ քաղութիւնը ունենայ յանուն Յեղափոխութեան գործելու, յեղափոխական կազմակերպութեան մը հովանիին տակ, անոր հզօր ու անմատչելի հեղինակութեանը կաթնած:

Շուարածներուն ծանր կուզայ այսօր անտարբերներու եւ չէզոքներու անարգ բազմութեան մէջ, անօր միաբանած նկատուիլ: Ասիկա կը վերաւորէ իրենց հայրենասիրական զգացումները: Մենք ուրախութեամբ կ'արձանագրենք իրենց այդ հոգեկան վիճակը: Ու կը հարցնենք իրենց՝ թէ ի՞նչի կը սպասեն, ի՞նչ բան է, որ կը խրտչեցնէ զիրենց անմիջապէս նետուելու Յեղափոխութեան գիւղի: Մինչև հոս հասնելէ ու հոգիով մեզի ա՛յնքան մօտեցած ըլլալէ վերջ, կարող չպիտի ըլլային արդեօք զերպոյն քայլը տանելու: Չենք կար-

ծեր: Անոնցմէ մէկը կը գրէ մեզի, Պուլկարիոյ մէկ քաղաքէն:

«Չեմ կրնար զօպել ինքզինքս չյայտնելու համար ձեզի շնորհատրութիւններս այն կորովի եւ շղուտ ոճին համար (անկարելի պիտի ըլլայ մեզի հատուած մը գնել առանց քօրլիմաններ կրելու)՝ որով կը քննէք, կ'ուսումնասիրէք մեր արտասահմանի Հայութեան ներկայ գրութիւնը եւ անխնայ կը ձաղկէք այն թուլութիւնը, անտարբերութիւնը, անզիտակցութիւնը եւ նամանաւանդ ոճը գործ անզգամութիւնը չրագրութեան, որոնց ենթարկուած է ժողովուրդը բարոյական ահոնելի անկուծով մը:

«Եթով տարի է որ ձգած եմ թիւրքիա կոչուած զժոխքը, ուր անպաշտպան եւ իր անողորմ ճակատագրին ձգուած ազգ մը կոտորուեցաւ, հալածուեցաւ ու գեռ կը շարունակէ առնչուիլ անբեկախելի ու անտանելի ռեժիմի մը ներքեւ: Մինէ զրեթէ ամէն մէկը իր կորուստը ունեցաւ այդ երկրին մէջ եւ շատերը անձամբ կրեցին անհամար զրկանքներ, անձի կորուստ, ապագայի ջախջախում, յոյսերու փճացում, թալան եւայլն, ու զեռ խելքերնիս պուխնիս չեկաւ:

«Բարիզէն մինչև հոս, ամէն օր, աչքիս առաջ ունեցայ այն ամէն պարագաները մեր հալածական կեանքին, որոնց ուսումնասիրութիւնը կ'ընէք, եւ ամէն օր սրտի չորմօք մը ունենալէ զատ ուրիշ բան կարելի չեղաւ ընել: Ժամանակ մը մէկ քանի ընկերներով, հոս փորձեցինք տեղական վերածնութիւն մը: Հազիւ թէ քանի մը քայլ առած էինք եւ ահա լրագրութեան մէջ սպրդած հրէշներ կամաւ սխալ բացատրել ուզեցին մեր ձեռնարկները ու մեզի արգելք ըլլալու համար՝ երբ ուրիշ բան չգտան՝ անձնականուս սկսան ուղղել իրենց ճիւղային պոռչուները եւ ժողովուրդը անոնց ալ տկանջ կախեց, սին վէճերու հետեւեցաւ, շուարուծը տիրեց ամէն կողմ, անխոստովանելի զգացումներու եւ բարքերու տէր բառագիրներ միացան, խմոր մը կազմեցին, եւ անխնայ պայքար մըն է սկսաւ: Չեղաւ, չգտնուեցաւ թերթ մը որ զանոնք զգաստութեան հրաւիրէր: Եւ ահա մեր ուժերը շլատուեցան, ամենքս ալ զզուեցանք, մերժեցինք շարունակել անհաւասար պայքարը եւ քաշուեցանք հրապարակէն, ամէն մէկերնիս ամբափութելով մեր անձնական գործերուն՝ մէջ:— Ըսէ՛ք, կ'սուղաչեմ, պիտի է նկատուի՞նք մենք ալ չեզոքներու եւ անտարբերներու դասակարգին մէջ»:

Ու կօկիծոտ շեշտով մը կ'աւելցնէ.
 «Ի՞նչ ուժեր կան դառնացած, վշտացած եւ ապարդիւն մնալու դատապարտուած, լոկ՝ յեղափոխական գիւժակին ներքեւ ազգը շահագործողներուն պատճառաւ ու իրենց կոչումին անզիտակից շահամուլ խմբագիրներու անիրաւ յարձակումներուն հետեւանօք...»:
 Մենք չենք ճանչնար այս տողերը մեզի գրողը, բայց համոզուած ենք թէ անկարելի բան մըն է՝ զգալու

և խորհելու այս եղանակը ունեցողի մը՝ կազմ ու պատրաստ չըլլալ արդէն մեզի հետ քաշելու միևնոյն ճամբէն, դէպի միևնոյն նպատակը, միևնոյն անյորդուելի հաւատքովը:

Կուսակցական մարդորութիւնը ա՛յն բանն է, որուն ամենէն աւելի անընդունակ ենք մենք հոս: Մինք չէ՛ որ պիտի զիջանէինք ելլել ըսելու.

— Եկէ՛ք Հնչակեան Դրօշին տակ ու ամէն բան ըրած պիտի ըլլաք...

Չէ՛, այս յեղափոխական խանութպանութիւնը մեր գործը չէ: Մենք մեր բրօքսականը կ'ընենք համոզուով եւ խանգաւառութեամբ: Ասոր անոր թելն քաշելու եւ դէպի մեր կարգերը բերելու բնա՛ւ տրամադիր չենք: Յեղափոխական յարումները ա՛յն ատեն միայն մեզի կը յուզեն ու կը խանգաղեցնեն՝ երբ ինքնաբեր կ'ընք նամատոյց գիտակցութեամբ կը կատարուին անոնք: Բայց չպիտի զողորնք երբէք բարձրօրէն յայտարարելէ բոլոր շուարածներուն ու բոլոր վարանոտներուն, որ Յեղափոխութեան մէջ միայն պիտի կրնան գտնել իրենց անստուգութեան վախճանը ու իրապէս ու արժանաւորապէս պիտի կրնան ծառայել իրենց ցնդին: Հոս երկ-դիմութիւն չի կա՛յ: Հոս ճամբան շիփ շիտակ է դէպի նպատակը, թէև գժուարին: Անոնք որ կ'ուզեն իրենց կեանքը զեղեցկացնել ու՝ ետական հետապնդումներէ զուրս՝ ուրիշներու համար ապրելու գերագոյն հրճուանքը ճանչնալ, անոնք այս ճամբէն պիտի քաշեն, առանց վարանելու, առանց ժամանակ կորսոցնելու:

Ուրիշ կական կէտ մըն ալ կը կրկնենք ու պիտի կրկնենք:— Մեր մէջ, ո՛ր և է հանրային գործունէութիւն ա՛յն ատեն միայն գոյութեան իրաւունք պիտի կրնայ ունենալ ու պիտի կրնայ արգաւանդ ու տեսական ըլլալ, երբ յրացոցիչ մասը կազմէ— ու ամէն տեսակ հանրային ճիգ իր տեղը ու կարեւորութիւնը ունի հոն— յեղափոխական գլխաւոր ու տիրական ճիգին:

Ուզեն, չուզեն, պիտի ստիպուի՞նք համոզուիլ ասոր բոլոր անոնք, որ՝ իրենց քանի մը ֆրանքներուն կամ քանի մը անիմատ ֆոգոններուն կոթնած, ապաւինած՝ յաւակնութիւնը կը հրապարակեն առանձին գործելու աշխատեալ օգտակար ըլլալ կարծելու եւ մանաւանդ յեղափոխական մարմիններու վրայ հսկելու զուարճալի ու միամիտ իրաւասութիւնը ունենալու:

Անոնք, որ կը յամառին տակաւին այդ գէշ ցնորքին ետեւէն, անոնք ամենէն առաջ ինքզինքնին կը խաբեն: «Յեղափոխութիւնը ա՛լ պայման մը դարձած է Հայուն ապրելու իրաւունքը ունենալու համար», ինչպէս ա՛յնքան սրատեսութեամբ կը զրէ մեր անձանօթ թղթա-կիցը, որ փորձագութեամբ զիտցած ըլլալ կը թուի մասնակի և ունայնամիտ ձեռնարկներու տխուր ու ար-ժանաւոր ճակատագիրը: Առանձին գործունէութեան կողմ-նակիցները՝ էթէ յաջողին իսկ նիւթական վիթխարի մի-

ջեցներ ձեռք բերել— ինչ որ գրեթէ միշտ անհաւանական է, որովհետեւ այդ մարդիկը այնչափ ու աւելի կծծի են, որչափ փառամուլ— անլուծելի պիտի անկարողութեան դատապարտուին: Արդէն չի կա՛յ միևնոյն՝ քաղքենի փառասիրութիւններէ զոհուած՝ որ կարենայ մրցիլ յեղափոխական աշխատաւորներու խոնարհ ու քրտնաթոր լուծանքուն հետ:

Շուարածները այս բոլորը տարտաժողէն զգալ կը թուին: Ֆարակոյս չունինք, որ պիտի հասկնան ու ընդ-գրկեն մեր գաղափարներն ու հայե սցենները բոլոր անոնք, որոնց կ'ակնարկեն մեր անձանօթ բարեկամին վերջին խօսքերը:

Թո՛ղ շուարածները Շիտակ Ճամբէն սկսին քաշել՝ մենք կ'ապահովցնենք զիրենք, որ ա՛լ չպիտի հանդի-պին— և եթէ հանդիպին՝ մինակ չպիտի ըլլան հարթելու գանոնք— այն խոչընդոտներուն, որոնց առջեւ ա՛յնքան շուտ տեղի տուեր են զզուած ու վհատած:

Եւ եթէ պատահի ալ, որ ճամբան մթննայ երբեքն ու Չարիքին դարանակալ զօրութիւնները կառչին դարձ-եալ անոնց քայլերուն, եթէ պատահի, որ նենգութեան, չկամութեան, ատելութեան, ապերախտութեան, վատութեան ու մատնուե՛նեան եղբայրագալ զծնէ Չեղքը հետապնդէ անոնց ու ետեւէն զարնէ զիրենք՝ ինչ փոյթ-օտայթաքիլ, գլորիլ, արիւնիլ, օտքի ելլել ու յամառիլ պի-տի սորվին շուարածները, և եթէ օր մը ինքան վերջնա-պէս՝ ինչ փոյթ նորէ՛ն, քանի որ ամբոխներու բազմա-պատիկ ու վիթխարի կեանքովն ապրած պիտի ըլլան ար-դէն ու՝ աչքերնին մինչեւ վերջը իտէալին սեճոած՝ չքե-ղօրէն պիտի ինան:

ԱՍՊՈՏԱԿՆԵՐԸ

ՄԻՆԱՍ ՕՂԼՈՒ

Գ.

ՆՈՐԸՆԾԱՆ

Թաթոս վառարանին վերի ծայրը տեղ ցուցուց Ոս-տա Մակարին, զոր շատոնց կը ճանչնար: Ազալար թիւրք գիւղի, Բէսթէնէ կէտիչիի և Տօմպալախնց մի-ջեւ գտնուող պզտիկ զոգահովիտի մը մէջ իր սեփա-կան տունը ունէր ան, ու՝ արհեստով հիւսն ըլլալով՝ բոլոր գիւղացիներուն ալ ծանօթ էր: Առպատակներուն

ուշադրութիւնը սեւեռեցաւ վայրկեան մը հսկալ հասա-
կով, գեղին պեխերով, խաժակն երիտասարդին վրայ
զոր Մակար հաս առաջնորդեր էր այդ գիշեր: Ամենուն
աչքերը գէպի այդ յաղթանդամ հայրդին պաղած կը
մեային:

— Չեզի նոր հիւր մը ու նոր ընկեր մը կը բերեմ,
բաւ Ուստա Մակար իր ընկերը ցոյց տալով, Տրա-
պիզոնցի Պաղտասարը որ՝ ձեզի պէս՝ թիւրք պաշտօնա-
կան շրջանակէն հալածուելով՝ լեռներու մէջ իր հան-
գիտը փնտոել եղած է եւ ձեզի գինակցելու կաբօտը
կը քաշէ:

Պաղտասարի անունը լսելուն՝ Չերքէզը տեղէն ցատ-
կեց, անոր մօտեցաւ և շեշտակի նրբան ի վեր նայելով՝
զայն ճանչցաւ, երկու թեւերովը անոր գլուխը անթեց
եւ ուրախութենէն քիչ էր մնացեր որ զայն խնդգէր: Դեռ
երէկ էր, որ իրար սեսեր էին, կարճ խօսակցութիւն
մը միայն ունեցեր էին, սակայն կարծես յախտնական
մտերմութեան մը կապերովը կապուած ըլլային:

Սարկութեան թանձր խաւերուն մէջէն հպարտ ու
աննական արարքներով ընծիւզող այդ լեռնորդիներուն
մաքուր ու եղբայրական սրտերը գորովէ սարսռալով կը
վազէին գէպի այն մարդերը, սրունց ազատ ապրելու
ծարաւով պապակած՝ իրենց տնական հանգիստը ու
իրենց ընտանի երդիկները ձգելով՝ լեռնապառններու
թաւուաններուն մէջ ընդգզուծին բուռն ու շարքաշ ու տի-
րական կեանքը ապրելու ըրձանքովը կը տապկուէին:

Պաղտասար հազիւ ազատելով իր գլուխը Չերքէզի
հզօր բազուկներէն՝ խոշոր ու արի աչքերը շուտ կուտար
շորս կողմ իր միջավայրը ափսոսանքով ճանչնալու փափա-
քով մը: Իրական քաջերու շրջանակի մը մէջ էր, — իր
երիտասարդ կեանքին փայտալուծ երազն էր որ կը մարմ-
նաւորէր: Այդ խուժին իրաքանչիւր անդամին գլուխը կը
բարձրանար խրոխտ ու սէգ: Անոնց կամքը անբանաբա-
րելի էր, անոնց զէնքը ամէն բան կ'որոշէր: Կայտաս
ու գուժան գէտքերուն վրայ անոնց ընշացքները վեր
կը բարձրանային ոլորուն և իրենց ամէն մէկ խօսքերը
ինքնաժառանգութեան կարուկ շեշտով մը անկեղծութիւն
ու անվեհեր յամառութիւն կը պոռային: Չգետէ աւելի՝
զէնք կար վրանին, ասպատակներուն միակ գարգը, ու
բուն քանակութեան շատութիւնը իրենց հպարտութիւնն
ու քաջութիւնը կը բազմապատկէր: Քարթուշամանները՝
փայլուն ու կակուղ սեկէ շինուած՝ անոնց կուրծքն ու
թիկունքը կը խաչաձևէին եւ ուրիշ քանի մը հաստ ալ
մէջքերնին կը զօւակնուէին: Կիւրծի պաշտիւնն՝ մե-
տաքսապատ վերջաւորութիւններով ուտերուն վրայ փրօ-
ուած էին, իսկ անոնց արծաթաթիւ ծոպերը գանգուր
ներու երկոյթով կը կամարաձևէին անոնց ճակատները:
որոնց տակէն թափանցող ու սուր աչքեր կը վառէին
գիւցազնական ցոլացումներով:

Պաղտասար՝ երազացնորի նման իր յեղեղուկ նայ-

ուածքը մէկ քաշէն միւսը կը դարձնէր, չիրնալով հա-
ւատալ իր աչքերուն: Ինքը քիչ շատ զարգացած ու հայ
պատմութեան ծանօթ՝ երբէք չէր կրնար հաւատալ թէ
հայ մայրերը, որոնց արգանդները ամբողջ հինգ դարեր
քաջերու ծնունդ տալէ ամուլ էին մնացեր՝ կարող պիտի
ըլլային ասանկ հերոսներ արտադրել գիւղական անշուք
երդիկներու տակ ու աւատակուն բարբարոս ձեռքերու
ներքե ճնշուած:

Ասպատակներուն շնչառութիւնն անգամ տարբեր էր
կարծես, ու մթնոլորտը, զոր իր թռքերովը կը ծծէր ա-
նանկ տարօրինակ հմայք մը սնէր, վառօղի ու արիւնի
համ մը, որ սկսաւ իր ամբողջ էութեան վրայ ներգոր-
ծել ու զայն յեղաշրջել: Կարիճներու հոգին կը շնչէր
հիմա, ու իր կուրծքը սկսաւ ուռիլ, ու զգաց թէ իր վրա-
շէն բան մը խոյս կուտար տարօրինակ ծանրութիւն մը
ու սիրաը կը թեթեւար, կը փառաւորուէր: Իր գոյու-
թիւնը ստուգելու համար վերջին ճիգ մը ըրաւ ու իր
ամբողջ յաղթական սարմուղը թօթուրուեցաւ: Սարկու-
թեան վերջին շոշորթը իր վրային սկրթուելով վար ին-
կաւ: Նոր մարդ մըն էր ալ ան, ու Հայութեան ամբողջ
մերկութիւնը իր կատարելութեամբը կ'ըմբռնէր հիմա: Նոր
արթնացողի մը պէս ձեռքը այս ու այն կողմ տանելու
փորձութիւնը ունեցաւ: Ինքզինքն ալ շօշափեց և — սահ-
մունդով հաստատուած — մօրէմերկ ըլլալ զգաց: Չէնքի ա-
մենապատիկ մէկ մասն անգամ չկար վրան:

Վարժապետը Պաղտասարի շարժումներուն կը հետե-
ւեր իր հետաքննին աչքերով: Քանի մը բուպկներու մէջ
անոյ հոգեկան տաղնապը ըմբռնէր ու զգացեր էր որ ան
ալ հերոս ընկեր մը ըլլալու կոչուած էր:

— Մարգուանէն կուգաք, այնպէս չէ՛, հարցուց թա-
թոս, վերջ մը ցնելու համար Պաղտասարի վրդով-
մունքին:

— Այո՛, Մարգուանէն կուգամ, պատասխանեց Պաղ-
տասար, ինքզինքը մողուրեւելով, և յատուկ պատուիրա-
կութեամբ մը եկած եմ: Ամէն բան այս նաժակէն կ'իմա-
նաք, աւելցուց ան, ու իր բաճկոնին առտառը պատռե-
լով ծրար մը հանեց, թաթոսին երկնցուց:

Վարժապետը նաժակն առաւ ու՝ սրբութեան մը վրայ
յուզումէ կողզաշող ձեռքերով՝ բուցաւ զայն: Չինքը
շրջապատող կարիճներուն ապագան այդ պատառ մը
թուղթին ծալքերուն մէջ գտնել կ'երազէր:

Ասպատակները՝ հեւացող լուսութեան մը մէջ արձա-
նացած՝ թաթոսի շրթունքներուն կառչեր էին իրենց
հրաժառ նայուածքներովը:

Վարժապետին գէտքը կ'ալլափոխուէր, քանի կը յա-
տաշանար ան նաժակին ընթերցմանը մէջ: Բնութեամբ
մտածկոտ ու միշտ ախրազէմ՝ հազուադէպ պարագա-
ներու մէջ միայն անոր ծիճաղիլը, անոր ինդուններու
թիւնը տեսեր էին, ու հիմակ տարօրինակ ժպիտներ կը
կ'ծէին անոր շրթունքը, անոր աչքերը արտակարգ ցոլ-

քերով կը բորոքէին ու ներքին անպիմադրելի բերկ-
րանքէն գրեթէ անգիտակից իր բոլորտիքը գտնուող-
ներուն ներկայութեանը՝ ծանրաբարոյ Վարժապետը յան-
կարծ ոտքի ելաւ ու սկսաւ ցնծուն լսակերպ մը մոլորալ
քթին տակէն:

Ասպատակները սահմակած՝ իրեն կը նայէին: Պաղ-
տասարն ալ ապշած կը մնար:

—Ֆորձերնիս կարգին է, աղա՛ք, մէկէն խզեց թա-
թոս մահացնող լուսթիւնը, մեր երևակայածէն աւելին
կարգապետած է, Յարութիւնը հայ ազգին երախտագէտ
ասպազային օրհնութեանը ամենէն աւելի արժանի անձե-
րէն մէկն է անկասկած:

—Խե՛րն օրհնած, ինչ որ պիտի ըսե՛՛ ըսէ՛ լմացու՛ր,
ինչու մեզ կը շարշարես, միջամտեց Մինասը անհամբ-
րութենէն շրթունքները կրծելով:

—Իրա՛ւ, ես բոլորովէն մոռցայ եղած անօրինութիւն-
ներուն մասին ձեզի խօսիլ, շեմ պիտե՛ր ի՛նչ խելքի վրայ
եմ այսօր, ըսաւ Վարժապետը, իր սովորական ընդմիջուած
տիրութիւնը հագնելով:

Յարութիւնի նամակը ամփոփ ու որոշ էր: Վարժա-
պետը ճրագին մօտեցաւ և սկսաւ կարդալ:

«Սիրելի թաթոս, կը գրէր Յարութիւնը, օրեր առաջ
ձեր կողմէն Ձերքէզը հոս զրկուած էր, տեղույզ գեղե-
րուն մէջ նոր երևան եկած հայ ասպատայային խումբի
մը գոյութիւնը մեզ ծանուցանելու: Յեղափոխական պա-
ղափարին հոս մուտք գտնելէն ի վեր, մեր ամենուս
շանքն եղած էր ատանկ կարիճներու խումբի մը կազմա-
կերպութիւնը: Բայց հոս, քաղցն ինչերու միջավայրին մէջ
մեծցող երիտասարդներէն զինուորուած հերոսախումբեր
արտադրելը գծուարին ու կանխահաս ձեռնարկ մըն է:
Հոս, քաղաքացի հայերու մէջ, որոնց ներքին սարը-
կական համակերպութիւններէ ժանգոտած է և որոնք
իրենց քաակէն անգին ու իրենց խանութներուն սեմէն զուրս՝
ո՛չ մէկ բարձր իտէալ, ո՛չ մէկ հանրային պարտականու-
թիւն կը տեսնեն՝ բնականաբար կարելի չէ յեղափոխու-
թեան տեսականութիւնն իսկ ներմուծել: Այս մարդիկը
երջանիկ կը զգան ինքզինքնին, երբ անձնական շահերին
ապահովէ և քանի մը գետնաւած թէմէնահնարով պէ՛ր ու
փաշա էֆէնտիներու հետ հաշա կ'ապրին: Այս մըլամ, ը-
բորոտած հոգիներուն հետ է սր Կորձ ունինք, ու կ'ըմ-
բռնէք անշուշտ թէ ի՛նչ խոչընդոտներու ստիպուած ենք
հանդիպել մեր յատկապաշտութեան միջոցին:

«Այս պարագաներուն մէջ, երբ մենէ քիչ հեռու,
Գուրունլուի անտառներուն մէջ, խումբ մը կարիճներ,
հերոսական ընդդիմամարտութեամբ կ'եղլին հարստահա-
րուին, կեղեքողին, այրող ու թալլողին թաթէն կը պար-
նեն ու Հայութեան պատիւին ու անունին ախոյեանները
կը կանգնին՝ մեզի ուրիշ բան չի մնար ընել, եթէ ոչ
թե թիկունք ըլլալ անոնց:

«Գերագոյն նիգերով, հազիւ հազ յաջողած ենք հոս

յեղափոխական իտէալին գեղեցկութիւնը ու անոր ան-
խուսափելի հարկաւորութիւնը մշակել: Ինչպի գործնակա-
նը մամանակ ունինք գեռ հասնելու: Գուր ձեր անտա-
ռուտ լեռներուն մէջ սկսե՛ր էք արդէն Հայուն աղէտ-
ներուն դուժկանն ըլլալ ու ձեր զէնքի որոտներովը
թժրած, ընդարմացած Հայութիւնը արթնցնել:

«Ձեր խումբին յանգույն արարքները հոս, մեր կազ-
մակերպութեան վրայ, հազար տնտական քարոզներէ
աւելի ազդեցին, այնպէս որ ամէնքն ալ, լարուած ու
տանկու պ ուշադրութեամբ մը, օրէ օր կը սպասեն նոր քա-
շագործութիւններու և թրքական նոր պարտութիւններու
աւետիսներուն:

«Ձեր ասպատակներուն համար մասնաւոր զուար-
մը քուէարկած ենք: Բեազմամիբրքի կլոր պաշար մըն
ալ ունինք անոնց տրամադրութեան տակ, ու տղաքներ
կան: որոնք՝ հարկը պահանջած ժամանակ՝ անոնց պիտի
առաջնորդեն:

«Այնպէս չէ՛ք մօտ ատենէն խումբը այս կողմերը
ճամբել: Մեր կազմակերպութեան տղաքը այն աստի-
ճան թերահաւատ են, որ իրենց անհաւատալի կը թուի
կուսույ, զէնքի տակ եզոյ հայերու գոյութիւնը: Կ'ուզեն
աչքովի տեսնել, ձեռքովի շօշափել, վառօրի հոտը
հոտուրտալու անզուպ ախորժակ մը ունին: Եւ թերևս
ասպատակներուն հոս ներկայութիւնը ամենէն հզօր դասը
ըլլայ զանոնց զէպի իսկական, գործնական յեղափոխու-
թիւնը մղելու:

«Խումբին համար միայն զէնք ու պաշար հայթայ-
թելով չպիտի բաւականանանք: Ձեր ասպատակները,
որոնք շատ կարելի է թիրքի արիւնով մկրտուած են,
մեր երիտասարդ կարիւններուն վարժապետները պիտի
ըլլան, զէնքի ետե: Զաջասիրտ նստելու գաղտնիքը պիտի
սորվեցնեն անոնց: Կոուսներու պէտք ունինք մենք:
Մինասը, իր ընկերներով, կտիւր դպրոցն է որ պիտի բա-
նայ մեր առջեւ:

«Գրաբեր», Տրապիզոնցի Պաղտասարը, առաջին
աշակերտն է որ ձեզ կ'ուղարկեմ: Արի, վառվռուն
ու նուիրուող երիտասարդ մըն է: Օ՛հեցէ՛ք զինքը, ձեռ-
նադրեցէ՛ք ու խումբին առաջին նորընծան թող ըլլայ:
Մօտ օրերն ուրիշներ ալ զրկելու պատրաստութիւնները
կը տեսնեմ:

«Եղբայրական բարևներս տուր խումբին իրաքանչիւր
անդամին: Ըսէ՛ իրենց թէ կտիւր, գոր կը մղեն, սուրբ
է: Եթէ հայ ազգը իր երակներուն մէջ խոնարհութեան,
հեզութեան, համբրութեան ու հպատակութեան ստուած
արիւնին տեղ՝ քիչ մը կտուելու, ըմբոստանալու ու զար-
նելու արիւնէն կրէր, մեր ճակատագիրը բոլորովին տար-
բեր կ'ըլլար Հիմա: Ընդունէ՛՛ բնկերական բարևներս»:

ՅԱՐԱԿԻՆ

Նամակին ընթերցումէն վերջը, ասպատակները,
ամենքն ալ Պաղտասարի շուրջը բոլորուեցան: Իրա-

բանչիրը, կատակով մը, կաշխատէր զայն շուարե-
ցընել: Ամենուն զէմքին վրայ ուրխութիւնը կը ճա-
ռագայթէր ու այդ ընդհանուր խնձղանքին միակ պատ-
ճառը Պաղտասարն էր: Եարաթներով, ամիսներով հեծ-
եալ ոստիկաններու շոկատներէն հալածուած՝ անոնք
չէին կրնար մտքերնէն իոկ անցնել թէ՛ իրենց ան-
տաններէն դուրս՝ Վարժապետէն զատ Հայեր պիտի
գտնուէին իրենց վրայ մտածող ու իրենց վիճակովը
հետաքրքրուող: Բարոյական ահագին ու օրտապնդող
ուժ մըն էր, որ Պաղտասար իրենց կը բերէր: Հապա
անար ասպատակ դառնալու մտադրութիւնը. ինչպէս՝
փափուկ կեանքի վարժուած ու չարքաշուծեան անձա-
նօթ քաղցնին պիտի կրնար զէնք շալկել, անտանե-
րու մէջ ու լեռներու առապարներուն վրայ ոստոտել:
Ասպատակները, լարուած ուշադրութեամբ մը, ճրագին
ազոտ լոյսին տակ զայն կը չափչփէին: Անոր նուրբ
դիմագծերը հակասութիւն մը կը կազմէին իր հօկայ ու
պարթև հասակին հետ: Եթէ անտառին խորերը ծնած
ըլլար ան ու լեռներու օդը ծծէր, կը մտածէին ասպա-
տակները, սարսափարկու տիտան մը կրնար դառնալ
Պաղտասար:

— Ամէն բանէ առաջ, քեզ մկրտելու ենք, ըսաւ Մի-
նասը, ձեռքերը անոր ուսերուն վրայ դնելով:

— Վաստակով սեցնելու է այդ կարմիր թուշերը, որ
թշնամիին պատկառանք ու երկիւղ ազգին, միջամտեց
կապետը:

— Քիչ մը զէնք հոտուրտալ տուէ՛ք իրեն, աւելի
ներգործութիւն կ'ունենայ շիղերուն վրայ, ձայնեց
Յովհաննէսը:

— Մարթիի փամփուշտով քանի մը տեղը խարա-
նելու է, վրայ բերաւ Չէրքէզը, կորուած ատենը՝ մեր
խումբին վերաբերիլը կը հասկնան ու մեզի ետ կը
գարձնեն...

Այս կտրիճի կատակները աւելի կը գգուէին Պաղ-
տասարը, քան զայն կը շուարեցնէին: Նայուածքը մէկ
քաջէն միւր կը զարձնէր, անյագ փափաքով մը անոնց
վիզը պլուելու, զանոնք մէկիկ մէկիկ համբուրելու Պաղտա-
սար իր կեանքին է՛ն երջանիկ վայրկեանը կ'ապրէր,
անոր գերագոյն զինովութեանը մէջ ձգած ինքզինքը:

Վարժապետն ալ կատակարանելու ելքը էր հիմա:
Պատի քարը կազմող կոճերէն մէկին մօտենալով՝ գաղա-
նի պահարան մը բացաւ ու անոր անկիւններէն ափ մը
վառօղ աննելով, Պաղտասարին մօտեցաւ և լրջօրէն զայն
վառօղի փոշիով խաշակնցելէ վերջ, աւելցուց՝

— Պատերազմի Առաւուժի հոգին քու վրադ ալ հանգ-
չեցաւ, Պաղտասար, ասկէ վերջը, ա՛լ թիւրքէն չես
վախնար, ու ձեռքին մէջ գտնուած վառօղին մնացորդը
կրակին վրայ լեցուց թաթօս: Թող պայթում մը, ու
զիզան զիզան ծուխով մը սենեակը լեցուեցաւ:

— Ասիկա մեր խունկն ու մօմն է, ըսաւ Չէրքէզը

Պաղտասարին մօտենալով, տե՛ս ի՛նչ անուշ կը բուրէ...

— Կատակը կը բաւէ՛, տղա՛ք, ընդմիջեց յանկարծ
թաթօսը, հիմա մեր զորժերուն վերադառնանք: Չեր
լեռը քաշուելէն ի վեր, այսօր առաջին անգամ ըլլալով՝
հեռուներէն հայ կտրիճ մը կուգայ ու ձեզի կը միա-
նայ: Քաջալերական է ասիկա, ու հիմա պէտք է պար-
զել իրեն ասպատակներու կեանքին ամենասեւ ու գա-
ժան կողմը, հասկնալու համար թէ պիտի կրնա՞յ տա-
նիլ այն չարքաշուծիւնները ու զրկանքները, որ ձեր
կեանքը կը սպառեն յաճախ ու անհամար վտանգները,
անակնկալ ու յեղակարծ ընդհարումները ու յանկար-
ծական դնդակները, որոնք ձեր չորս կողմէն մահ կը սպառ-
նան ու ձեր ճամբօն կը խրին:

— Եթէ այդ բոլորը աչքս առած չըլլայի, հիմա հոս,
ձեր մէջը չէի գտնուեր, կտրեց Պաղտասար Վարժապե-
տին խօսքը:

— Մենք դժբաղդ, բայց կամաւոր թափառական-
ներ ենք այս լեռներուն մէջ, յարեց Մինասը, մացառի
ու թուփերու խտութեան մէջ մեր ննջարանը կը պատ-
րաստենք, ձախերու կոտորուցները մեր անկողինը կը
կազմեն, մեր հրացաններուն պաղ երկաթին փաթթուած՝
զլուխիս քարի մը գնելով՝ քանի մը ժամ միայն աչ-
քերնիս կրնանք փակել: Վտանգը մեզ կ'արթնցնէ եւ
շատ անգամ առտուն՝ մութնուլուսուն՝ մեզ առաջին բա-
րեւողը թշնամիին գնդակը կ'ըլլայ:

— Աս ամէնը իմ փնտառածն է, ատոր կարօտը կը
քաշեմ տարիներէ ի վեր, ըսաւ Պաղտասար կտրուկ
չեղտով մը:

— Ասոնք օրերով հացի երես չեն տեսներ, խօսք
առաւ նորէն Վարժապետը, ասպատակներու կեանքին
դառնութիւնը աւելի որոշ կերպով Պաղտասարին պար-
զելու ջանքով մը, իրենց հալածական վազքին մէջ, շատ
հեղ, աղբախառն լճացած ջուրերով իրենց այրող ճարաւը
մարել կ'աշխատին...

— Եթէ ջուրի պէտք զգամ՝ թուքս կուլ կուտամ, իսկ
եթէ ատ ալ պակտի՝ մէկ տեղս կը կտրեմ ու արհնս
կը ծծեմ...

— Բնակարանի երես շատ քիչ անգամ կը տեսնեն
ասոնք, շարունակեց Վարժապետը, հորիզոնը զանոնք
կը զրկէ ու անծանօթ անտաներու մէջ անօսալծաց ի-
րենց ճամբան կը փնտռեն: Իրենց ամբողջ մտահոգ ու
արկածալի կեանքին հետ, իրենց ընտանիքներուն կա-
րօտն ալ շալկած՝ լեռնէ լեռ միտին կը պտտցնեն:

— Բնակարան, ընտանիք ետ այն օրէն մոռացութեան
տուի, երբ ձեր ասպատակներուն համբաւի ձայնէն
հմայուած՝ քայլերո զէպի այս կողմերը ուղղեցի...

— Ուրեմն, դո՛ւն մեր անբաժան ընկե՛րն ետ, դռնեց
Մինասը, տեղէն վեր ցատկելով ու Պաղտասարի ճա-
կատէն համբուրելով:

Ասպատակները, ամենքն ալ անոր հետեւեցան ու՝

կարգաւ՝ իրենց եղբայրական համբոյրը տուին Պաղ-
տասարին:

—Որպէս զի ամէն բան կատարեալ ըլլայ, ձեր
հանդիսաւոր երգումն ալ ըրէք հիմա, վճոց Վար-
ժապետը:

Ամենքը մէկ պատկանանքով ոտքի ելան, ու վայր-
կեան մը վերջը զէնքերու շեղակոյտի մը վրայ դրուած
էր Աւետարանը ու թաթոս լազի խոշոր դանակ մը զե-
տեղած էր սուրբ գրքին վրայ:

—Կ'երզնուք այս նուիրական առարկաներուն վրայ,
կ'երզնուք ձեր խղճին, ձեր պատուոյն վրայ, կ'երզնուք
տառապեալ Հայ ազգի արևուն՝ հաւատարիմ մնալ ձեր
կոչումին ու՝ ի հարկին՝ արիւննիդ տալ ազգային ազա-
տագրութեան սուրբ զատին:

—Կ'երզնում, ըսաւ Պաղտասար զողզացող ձայ-
նով մը և արցունքի երկու կոշոր կաթիլներ իր լճացած
աչքէն վար, Աւետարանին վրայ ինկան: Երանութեան
գերագոյն արցունքներն էին ատոնք:

—Ես ալ, խօսք առաւ Ուստա Մակար, ինքզինքս
բարեբաղդ պիտի սեպեմ, եթէ ձեր նորընծային կնքհայրը
ըլլալու իրաւունքը տաք ինծի:

Ասպատակները միահամուռ ընդունեցին Ուստա Մա-
կարին առաջարկը: Թաթոսը լազի լայն բերան եւ-
թաղան մը բերելով՝ Պաղտասարի կուշտին կախեց:
Ասպատակի մետաքսապատ պաշարէք փաթոցին անոր
զլխուն՝ ու թեթեւ գպղան հագցուցին անոր, ու ամենքը
մէկ ետ, զէպի անկիւն մը քաշուելով յափշտակուած հե-
տաքրքրութեամբ մը սկսան զայն դիտել:

—Այդ կերպարանքին տակ եթէ ցոյց տաք միայն
զայն Թիւրքին, կը բաւէ անոր սարսափ ազդելու, ըսաւ
Ուստա Մակար, ինքն ալ բերանաբաց հիացումով զայն
դիտելով:

Արշալոյսը մօտեցած էր: Լոյսի ազոտ ճաճանչներ
թանձր խաւարին մէջ թափանձել սկսեք էին ու զէմը,
դիպի արևելքի հորիզոնին վրայ վեհափառորէն իր զուրբ
բարձրացնող Չէօլտիւրի անտառագարդ կատարը արևին
վերելքը կը նախաձայնէր: Յորեկ ժամանակ բնակա-
րաններու մէջ ասպատակներուն ներկայութիւնը կրնար
աղէտաւոր ըլլալ զիւղացիներուն: Պէտք էր որ հեռանա-
լին ու վազուան անստուգութեան հանդէպ իրենց դիրքը
օրոշէին:

Վարժապետն ու Ուստա Մակարը բարի ճանապարհ
մաղթեցին անոնց, իսկ պաղտասարին ճակատը համբուրե-
ցին, որովհետեւ՝ վիթխարի կազմուածքով, նայուածքը հը-
պարտ ու զմնէկէմ՝ խուճին կրտսերն էր սակայն ան հիմա
ամենքը կը գուրգուրային անոր վրայ:

Պաղտասար երանութենէն կը ճառագայթէր: Ինքզին-
քը բոլորովին փոխուած, նօրէն ծնած կը զգար ան: Հիմա
Կոստին զաշտն էր որ կը բացուէր, կը տարածուէր իր
առջեւ, ու Հայ առէժներ իրեն թե ու թիկունքն էին:

(Շարունակելի)

ԳԹՈՒԹԵԱՆ ԶՈՂԵՐԸ

Ա.

Այս երկու բառերուն անակնկալ կցորդութիւնը,
առջի բերան, շլմորէ թերեւս ձեռնէ շատերը ու փոր-
ձուիք բնագրութիւն բառաւորքի մը շլթիկ մտահոգու-
թիւնը վերադրել մեզի: Բայց եթէ չորսդինիդ նայիլ
դիտնաք՝ հազուադէպ չպիտի ըլլան պարագաներ, ս-
րոնք պիտի զարնեն ձեր աչքին ու պիտի համոզեն ձեզի
թէ Գթութիւնը— քրիստոնէական այդ ամէն եղանակ-
ներու վրայ երգուած, փառաբանուած, նուիրագործուած
զգացումը— ուղղակի աղբիւրն է կարգ մը ընկերային
չարիքներու:

Գթութիւնն ալ իր զոհերը կ'ունենայ, ամէն օր, ինչ-
պէս ալքօլիդը կամ խաղաժուլութիւնը, քաջալերելով
յաճախ անհատին է՛ն նուաստացուցիչ ու անարգու հա-
կումները ու քանդելով անոր մէջ արժանապատուութեան,
ինքնավստահութեան, կամքի ու ձեռնբերութեան ազնիւ
կարողութիւնները:

Ո՛չ այն գթութիւնը անշուշտ, որ խելայեղ ու անտե-
րունջ որբին ձեռքէն կը բռնէ, որ օգնութեան կը փու-
թայ ճամբուն վրայ ինկած վիրաւորին, որ պատառ մը
հաց կը նետէ զարնուած ու սովալլուկ ամբոխներուն առ-
ջեւ: առանց բարոյական փոխարինութեան մը շահախնդիր
ակնկալութեանը: Ո՛չ օխրալի գթութիւնը եղբայրական Սա-
մարացիին: Այլ գթութիւնը, որ կը խոնարհեցնէ, կ'անպատ-
ուէ, կ'արատաւորէ, զոր կ'երթան կը գտնեն հեռաւոր ու
անձանօթ անկիւն մը, որուն գուռը ափ կ'առնեն ու կը
սպասեն զլիսիւր ու աղաչաւոր, որ հանդիսաւորապէս
ձեռքը կ'երկնցնէ քեզի, որ պաշտօնապէս կը կարեկցի,
կը պաշտպանէ, կը փրկէ, որ պատառ մը հաց կը դնէ
բերանդ, ամէն անգամ որ պատառ մը կը փրցնէ հո-
գիէդ, վայրագ գթութիւնը Հայ «Ազգային Բարեբար»ին
կամ օտար Կրօնաւոր Մարդորին:

* * *

Հեռունքը փնտռելու պէտք չունինք: Թեազարձ
նայուածք մը մեր վերջին 4-5 տարիներու ազգային
կեանքին վրայ՝ պիտի բաւէ հաստատելու փաստակար,
զրեթէ աղէտաւոր գերը, զոր Գթութիւնը ունեցաւ
մեր բարքերուն ցնորատու արագութեամբ այլասե-
րումին մէջ: Հայ թշուառութեան ահագնութեան առ-
ջեւ՝ մեր ունեւորներուն ժլատ կարեկցութեան ու համ-
րուած ու հաշուուած օգնութեան ամօթին շափ ու ա-
ւելի տխուր բան մը եղաւ մեր ազգովին ցոյց տուած
չորեքթաթ տափակութիւնը, խանդավառ ստորնացումը

հայ ու օտար Գթութեան ոտքին տակ:

Ազգային անբարոյացուծի այս հօկայ գործը սկսաւ հայ աղէտքներու վաղորդայնին, արտասահման խուժող սղբալի ամբոխներուն հետ, ու անոնցմով ընդհանրացաւ, տարածուեցաւ արտասահմանի գրեթէ բոլոր հայ գաղթականութիւններուն մէջ:

Ամբողջ սերունդներ, որոնք իրենց երկրին, իրենց բնական միջավայրին մէջ պիտի պայծառօրէն, արժանաւորապէս ու առնաբար ապրէին իրենց մտքին կամ բազուկներուն աշխատութեամբ, արտասահմանի անստուգութեան ու դիրին ու փորձող ձեռնտուութիւններու հրապոյրին մատնուած՝ անբարոյացան, պոռնկացան, ձեռք երկնցնել, աղբօսել, յուրալ, ողբուկոծել, կեղծել, կսկծալ, վիզերնին ծոկ սորվեցան, ողորմութեան հանդուրժեցին ու խոնարհեցան մարդերու առջեւ, զորս յաւիտենապէս պիտի արհամարհէին, որոնց երեսին պիտի թքնէին, եթէ իրենց երկրին, իրենց միջավայրին, իրենց հայրենի տունին իրենց ընծայած նիւթական բաւարար ապահովութեանը մէջ հանդիպէին անոնց:

Ու առիկա ամենէն կօկծալի, ամենէն սիրտ կոտորող երեւոյթն է մեր այս վերջին տարիներու ազգային կեանքին: Մարդիկներ, որոնք կոչուած էին՝ իրենց տաղանդով ու իրենց գերազանց յատկութիւններովը՝ տիրական դեր մը ունենալ իրենց ցեղին մէջ, որոնք ազնիւ ու պարկեշտ միջոցներով պիտի կրնային ապրիլ՝ իրենց միջավայրէն արժատախիլ՝ արտասահմանի անկարելի կեանքին նիւթական սպանիչ հոգերուն դատապարտուած՝ յամբար կորսնցուցին—բարոյական ինչ զըժընդակ տագնապներով— իրենց արժանապատուութեանէն, հպարտութենէն, իրենց բնական ազնուութենէն խոշոր ու թանկագին կտորուանքներ ու յաջորդական յուսահատ զիջումներով—բարոյական անկումներ, աւաղ—անսոցմէ ուսանք ահամայ, գրեթէ գիտակցաբար այլաօրեցան, ահառնին կրճտեցնելով ու անկարողութենէ տոնալով ներքնապէս: Չէ՛, քար չնետենք անոնց ծոած կոնակներուն: Հերոսներ պիտի ըլլային անոնք, եթէ կարենային յաղթել թշուառութեան անողոք ու անագորոյն հալածանքին, ու ամէն քայլի հերոսներու շնք հանդիպիր այս պատկուցութեան, միջակութեան ու ցածութեան օրերուն:

Նկարագրի ինչ գեղեցկութիւններ արուեցան, խոռուեցան այսպէս, ինչ հարազատ ու ազնուական հոգիներ պղծուեցան, լղճուեցան Գթութեան պոռնիկ սեւ մերուն վրայ: Ո՛վ պիտի երբէք հասկնայ անկուսի դժնդակ տոմար, զոր արտասահմանի ճամբաներուն վրայ լքուած Հայ Երիտասարդը ապրեցաւ: Աստու մը ելաւ ան մտատանջ ու անձկոտ: Պաղ ու սպառող տենդի մը մէջ հագուեցաւ հապշտապ, ու վերջին անգամ մը, խելայեղ մասններով, մեծ ու փոքր բոլոր զրպանները խուզարկեց մտոցուած ու փրկարար մետաղի կտորի մը յոյսովը սարքը:

Ո՛չինչ: Այդ ատուան, սովորականէն շուտ անօթեցաւ, յագեցումին կարելութեան կշտացնող ապահովութենէն զրկուած: Աչքերը սկսան քիչ մը մթննայ ու նայուածքը պղտորեցաւ: Անկողնէն դեռ ոտը ելած՝ անսահման յոգնութեան մը իր ուսերուն վրայ ինչալ, ճրնշելը զգաց: Եւ սակայն ներսիդին է՛ն դիւային, է՛ն արիւնտ պայքարը կը մղուէր: Արժանապատուութեան զարագացած, ըմբոստացած զգացումն էր, որ կը ցցուէր, կը քստմեւէր, յամառելով չհամակերպիլ ու ինքնապահպանուած խելայեղ բնագոյր՝ որ անոր դէմ կը ծառանար սո՛վ տոնալով: Ատեն մը այդ երկուքին մէջ տարուբեր՝ զարարեցաւ: Բայց վերջապէս ստամոքսը յաղթեց հոգիին: Հայ ծնած էր եւ ուրիշ կերպով չէր կրնար ընել: Մեքենաբար ոտքի ելաւ, զլխարկը դրաւ ու ճամբայ ինկաւ, ա՛լ գրեթէ կորսնցուցած ըրածին յստակ գիտակցութիւնը: Կէս ժամ վերջը, պատկառելի դրսն մը առջեւ կանգ առաւ: Իր քայլերը կարծես հոգէն անշատուած էին եւ ուղեղը՝ գանկէն հեռացած: Չէր գիտեր թէ ո՛ւր կը գտնուէր, ի՛նչու հոտ կցեր էր: Գուռը զարկաւ: Շիլկամ որեւէ զէմքով մէկը եկաւ բանալ ու երեսն ի վեր ստաննեղէն ու կասկածոտ նայուածքով մը նայեցաւ: Երիտասարդը անուն մը տուաւ ու ներս մտաւ:

Հանգիստ թիկնաթոռի մը մէջ բազմած մարդու մը առջեւ՝ քանի մը անիմաստ ու անկապակից բառեր կը թօթովէ հիմա, կօկորդին մէջ շունչին հասնիլը, խեղճուիլը զգալով: Մարդուը յաճախ անտարբեր կ'ըլլայ ու՝ հակիծօրէն մերժողական՝ դուռը ցոյց կուտայ անմիջապէս, երբեմն՝ այլանդակ, անկիրթ ու անխղճահարձ գիշակեր զազանի մը պէս, որ ինքնամատոյց որօի մը վրայ պիտի գնէր, մխրճէր իր ճանկերը՝ խեղճ ընկճուած տղուն վրայ կ'իյնայ ու շնականօրէն օգտուելով անոր շուտուածի ցաւագին վիճակէն՝ իր տղմուտ ու զարշահոտ հոգիին բովանդապ ժահրն ու կղկղանքը կը շտապէ թափել անոր վրան, զայն շփօթելու, ստորնացնելու և իր նիւթական գերազանցութեամբը անասնաբար ջախջախելու կատաղութեանը մէջ գերագոյն ու սատիք հեշտութեամբ մը արբենալով: Կը պատահի իսկ, որ «ազգային բարերարը» չի քաշուիր ձրիաբար կասկածոտ ըլլալէ ու՝ յոփացածի իր հաստիօր սկեպտուութեամբը զինուած՝ խնդրարկուին գէմքն ու մարմինը մանրամասնելու հագուագիւտ, վաւաշոտ ու ոճրագործ հրճուանքը կը նուիրէ ինքզինքին: Շատ ատուջ, շատ գեր կը գտնայ զայն: «Ի՛նչքը շատ գունաւոր է, աչքերը բաւական չեն մարած, ինտո՞ր ատանկ մարդ մը խեղճ, անօթի կրնայ ըլլալ, ինձի՛ պիտի կլլեցընեն...»: Այս մեծանուն բարերարին համար՝ պէտք է, որ հալած, մաշած, կմախացած, գերեզմանին մտեցած ըլլաս, որպէսզի օգնութեան արժանի նկատուիս...:

Այսպէս կա՛ւ այնպէս, հայ աղան անհնարին, դժոխային քառորդ ժամ մը կ'ապրի հօտ, հանդուրժելով թօլ տալով, որ՝ յագեցումէ իր կաշին մէջ ճաթող այդ

պանիկ քաղցնին՝ անխոստովանելի շահագործումներու տիրմէն պլշկած պիղծ մատուրները խոթէ իր բարոյական է՛ն փափակ զգացումներուն մէջ ու իր արծանապատուութիւնը, կեղտոտ, աղբոտ եղունքներովը, ճանկատէ, բզբտէ մոլեգնօրէն:

Պահ մը վերջը, փողոցին մէջ խելագարի պէս կը վազէ ան: Չի գիտեր թէ ի՛նչ ըրած է, ո՛րիկից կուգայ, զուտը կը խժշտայ խուլօրէն, ականջները ա՛լ չեն լսեր քաղաքին ազմուկը: Եղեանի մը լրումէն փախչողի պէս կ'երթայ հալածական, անապահով քայլերով: Երբեմն անմիջապէս ճաշարանի սեղանի մը առջեւ կը գտնէ ինքզինքը... բայց աւելի յաճախ տունին ահաւոր ճամբան կը դառնայ: Եւ այդ ձեռնունայն դարձին վրայ, կամաց կամաց կը սթափի ան, դուրս կուգայ ամբողջ այդ առտուան թմրութենէն: Ա՛լ անօթութիւնը չզգար: Միակ ու ալլամերժ զգացում մը, իր անձին վիթխարի զգուանքը կը լեցնէ իր էութիւնը ու ինքզինքը, իր հոգին փոխելու տարապայման պէտք մը կ'այրէ ներսիդին: Բայց Հայ է նորէն՝ ու կամուրջներու վրայէն կ'անցնի, առանց մտածելու վարէն անցնող ջուրին մէջ նետուիլ ու մաքրուիլ բռլոր այդ բարոյական անկուծի աղտէն, վերջնական ու անդառնալի լոգանքով մը:

Անձնասպանութիւնը սակայն ելք մըն էր վերջապէս, մարդկային, տրամաբանական, գրեթէ անխուսափելի մտահոգութիւն մը... Բայց Հայը անձնասպան չըլլար— գոնէ թշուառութենէ— այն Հայը որ կոխէն փախաւ իր անձը վրայ շտալու համար: Ու ինչպէս որ ստրուկ Հայը չի կոտոր, չի գարններ, այլ կը մարտնչուի, անանկ ալ թշուառ Հայը անձնասպան չըլլար, այլ անօրոտքէն կը մեռնի: Միթիթարութիւնը թէ կակածանք մեր ցեղային այս շատ յատկանշական երևոյթին առջեւ...

ԱՆՈՆՑ ՄԱՀԵՐԸ

ԴԻԱ՝ԿՍ, ՀԱՐՕ՝, ԴԻԱ՝ԿՍ...

Ու Հարօ, մահէն վերաւոր ճողոպրած Հերոսը ըսաւ ինծի.

— Ո՞վ պիտի գրէ եղբրական մեծ քերթուածը, հոյակապ զիւցազներգութիւնը Հայ Յեղափոխութեան Դրօշին տակ ինկողներուն, ո՛ր է հզօր ֆնարերգուն, որ պիտի գայ՝ ոտրկական դարերու բրգաւորումին տակէն ըմբոստացած ժայթքող Հայուն ամեհի գեղեցկութիւնը անմահացնել... Դո՛ւն այդ հրաշակերտումին մարդը, այդ աստուածացումին արուեստագէտը չե՛ս... Զու յօգնած

քաղցնի աչքերդ չվառեցան թափուող արիւնին կարմիր տաքութենէն, քու վատուժ ոտուրներդ չկոխեցին երբէք հայրենի սև հողերուն վրայ, քու թոքերդ Արհաւիրքը չչնչեցին, քու շրթունքներդ չճանցան, չընդունեցան հերոսներու հոգեվարքին արիւնոտ համոյրները, քու հոգիդ չսարսուց անոնց խոյս տուող հոգիներուն հպանցնումէն... Չէ՛, դուն չպիտի կրնաս քերթուող ըլլալ մեր ընդվզումին, մեր կռիւին, մեր արիւնին... Զու շունչդ կարճ է ու տաժանելի՝ փառաւոր ու ահարկու հոգիւններուն եղբրերգումին համար, քու ձայնդ խոպոտ է ու ժանգահար վրիժառու ու ախրական աղաղակներ արձակելու ու յաղթական վազորդայններու փրկարար հաւաքն ու փառքը օրհնեցելու համար... Դարձի՛ր, աղա՛ս, դարձի՛ր քու սոճոյն տարփանքներուդ, քու եսական ցաւերուդ, քու նիհար ու անարիւն երազներուդ, դարձի՛ր քու վտիտ ու ճզղած վանկերուդ, քու պզտիկ ու շնչատ երգերուդ... դուն ա՛ն չես, որուն ես կը սպասեմ ե որ պիտի գայ անտարակոյս գրելու համար նուիրական ու յաւիտենական Մատենանը Հայ Արիւնին...:

Ու անողոք Հերոսը, կոնակը դարձնելով իմ քայքայումիս, կը հեռանար ինէ, երբ խելայեղ հետեցայ իրեն ու աղաչաւոր՝

— Կեցի՛ր, Հարօ՛, կեցի՛ր պահ մըն ալ, աղերսեցի՛ իրա՛ւ, ես չեմ կրնար գոհացում տալ քու տենչանքիդ ու անարժան եմ անշուշտ քու սպասումիդ, բայց ձեռքդ ուսիս դի՛ր ու առն՝ սուր ինծի... Թերեւս վերածնի՛ հօգի՛ր քու ներշնչումէդ...

Ու ոգոքուած Հերոսը կանգ առաւ ու պատմեց ինծի:



— Անոնց կեանքերը դուն չգիտցար, անոնց շքեղ ու վսեմ ու վիթխարի մահերը պիտի ըսեմ քեզի այսօր:

Վարդան գեղեցիկ էր ու կարիճ: Գեղջուկ ծնած՝ ազնուական նրբութեամբ կազմուածք մը ունէր սակայն անիկա ու մորթի տարապայման, գրեթէ կոշտական փափկութիւն մը, որ տարօրինապէս կը հակասէր իր ապստամբ նկարագրին դաժան խստութեանը հետ: Անոր աչքերը խաժ թովջութեամբ մը կը շողային ու հպարտ հասակը կը ցցուէր, կը խոյանար ճկուն ու ամուր միանգամայն: Գեղին հարսնցու աղջիկները՝ աղբիւրին ճամբան՝ շատ հեղ հառաչեցին անոր ետեւէն: Բայց Վարդան չճանչցաւ կնկան համբոյրը, ու ժամանակ ալ չէր ունեցեր արդէն առնական արթնցող բնազդներուն ականջ դնելու: Յեղափոխութեան տարփանքը, անոր տարամերժ ու բուռն մտահոգութիւնը իր հոգին ու մարմինը լեցուցեր, խափաներ էին ու ա՛լ տեղ չէին ձգեր հոն ուրիշ տենջանքի, ուրիշ պլխաւոր զգացման:

Մենք՝ մանկութենէ կապուած իրարու հետ՝ միասին մեծցանք, միասին ըմբոստացանք, միասին լեռք

բաշուեցանք, միասին կուռեցանք, միասին ապրեցանք, բայց, աւա՛ղ, չկրցանք միասին մեռնիլ... Թշնամիին գնդակը շինայեց զիս անշուշտ, բայց Վարդան չթողուց որ ընդունիմ ես զայն, ու մինակ ինկաւ։

Իրիկուան մը դէմ էր։ Խուժքով վար իջեր էինք մեր ընտերէն։ Գիտէինք որ զինուորներ ձգուած էին մէջ ե. տեւն, բայց ա՛լ չէինք կրնար դիմանալ, անթուփունը մեզի դուրս հաներ էր մեր քարերուն տակէն ու մեր անձաներուն խորերէն ու՝ ամէն վտանգ աչքերնիս ա. ուսած՝ խելայեղ գայլերու պէս գեղի մը կը մտնեայինք։

Վտանգաւոր ճամբու մը մէջ, որ մերձակայ գի. դակը կը տանէր, բաւական յառաջացեր էինք արդէն, երբ յանկարծ, հեռուէն, մեր գիմացէն, ոտական զինուորնե. րու շուկատ մը՝ հորիզոնէն բաժնուելով՝ սկսաւ մեր վրայ խուժել։

Փակշիւ չէր ըլլար... տեսնուած էինք... ճամբան տա. փարակ էր ու երկայն... Թշնամիին կոնակ զարձնելը մահացու անխոհեմութիւն մը պիտի ըլլար մեր կողմէն։ Չորսդիմիս նայեցանք անձկագին... ո՛չ մէկ քարի կտոր, ո՛չ մէկ ծառի կոճղ, որուն ետին կարելի ըլլար նեա. ուիլ, ամբանալ ու կրակել անկէց։ Կորուսած էինք... պէ՛տք էր կուռիլ ու գոնէ կտրիճի պէս իյնալ։ Թշնամի մեռնէ տասն անգամ աւելի շատուոր էր... մենք հինգ հոգի էինք... հինգս ալ, տասնեակ մը քալ իրարմէ հեռու, փորի վրայ ինկանք... ու երկու կողմէն կրակը սկսաւ։

Անթուփունը ա՛լ մտոցեր էինք, ու գնդակները կը տեղացնէինք իրարու ետեւէ, մեքենական արագու. թեմա մը։ Իրիկունը իջնալու վրայ էր ու դեռ կը շա. րունակէինք անողոք ու մոլեգին հրացանաձգութիւնը։ Թշնամին՝ սահմակած, սարսափած մեր կատաղի ընդ. դիմութենէն՝ կանգ առեր էր ու չէր յանգչներ յառաջա. նալ, թերեւ կարծելով՝ հետզհետէ թանձրացող մուծին մէջէն՝ թէ ապստամբ բանակ մը օգնութեան փութացեր էր մեզի։ Գնդակները կը հասնէին սակայն անպարզում ու մեր գլուխներուն վրայէն խուլ, դիւային շփոցներով օդը կը ծակէին ու շատ անգամ կուգային մեր առջին, մեր քովը, մեր ետին հողին մէջ մխրճել, թաղուիլ։

Հրացանս լեցունելու վրայ էի, քանիբերորդ անգամ ըլլալով, չեմ գիտեր, երբ, մէկէ՛ն, տասը քալլ հեռուէն, Վարդանին ձայնը զարկաւ ականջիս...

— Դիակ, Հարօ, դիակ...

Անգին գարձայ խելայեղ։ Վարդան զարնուեր էր, ու աչքերը վրաս անկած՝ հրացանը բազուկներուն մէջ սեղմելով՝ ահեղօրէն կը հոնգար։ Բայց կանգ առնելու, դադարելու ատեն չէր ու ես՝ հրածարելով իմ սիրական ընկերոջս վերջին համբոյրէն՝ շարունակեցի կրակ ընել իմ կարգիս իյնալէ առաջ՝ անոր վրէժը լուծելու բուռն անհամբերութեամբ մը։

— Դիակ, Հարօ՛ ջան, դիակ, գոչեց նորէն Վար. դան, անձկութեամբ ինձի սեռած իր կարմիր աչքերը...

— Վրէժդ, հողի՛ս, վրէժդ պէտք է առնեմ, պա. տասրանեցի իրեն, շարունակելով կրակել...

— Դիակ, իմ Հարօ՛, դիակ, կրկնեց Վարդան, ա. բիւնուայ գետնին վրայ թօթուրտելով...

— Թո՛ղ որ իս ալ զարնեն, հողի՛ս, թո՛ղ վրէժդ ան. գամ մըն ալ լուծեմ... յետոյ կուգամ իմ արիւնս քու ա. րիւնիդ խառնել ու միասին կը մեռնինք...

— Դիակ, Հարօ՛ ջան, դիակ, կը հոնգար Վարդան շարունակ ու անհնարին ճիգեր կ'ընէր հողին վրայ գէպի ինձի շարժելու...

Բայց ա՛լ չէի լսեր իր ձայնը... աչքերս կը մթննային վառօդին ծուխէն, ականջներս կը խուլնային գնդակնե. րուն որոտումէն։

Յանկարծ կանգ առի։

Վարդան արիւնաշաղախ քաշկատուեր, քովս էր հա. սեր ու հոգեվարքի իր կենսասպառ ձեռուներովը թեւեւ կը բռնէր ու զիս իրեն կը քաշէր։ Հրացանս վար գրի պահ մը ու իրեն երկնցուցի շերմեռանդ շրթունքներս...

— Դիակ... առջիդ քաշէ՛... պատնէջ ըրէ՛... դիակ, հեւաց Վարդան, այն ատեն, ու մեր գերագոյն համբոյ. րին հետ, արիւնի վերջին ժայթքումը դուրս առաւով բերնէն՝ զլուխը գետին զարկաւ ու շունչը յանձնեց հայրենի հողին...

Վարդանի մարմինը պատնէջ ըրած առջիս, անոր ե. նտեւն կը քաշէի հիմա Թշնամիին վրայ։ Ո՛րչափ ատեն տեւեց ասիկա, չեմ գիտեր։ Մեր միւս ընկերները մէկիկ մէկիկ դադարեցան կրակելէ, ու ես, միս մինակ, կրցայ շարունակել, մինչեւ որ գիշերը իջաւ ու կուրցուց ամէն բան ու Թշնամի լոռեց վերջնապէս։

Այն ատեն ոտքի ելայ, շալկեցի Վարդանի գիակը ու անոր նուի ական բռնան տակ յողթական՝ ընտն ի վեր վազեցի, խաւարին մէջէն...

ԹԻՒՆԳԻՈՅ ԶՈՐՏ ԿՈՂՄԸ

Եւրոպական մամուլը զբաղեցնող հրատապ խնդիր. ներէն մէկն է ֆրանքո-թրքական վեճը, որ հետզհետէ սուր կերպարանք մը կը ստանայ, շնորհիւ սուլթանի բռնած երկղիծի ու խարդախ քաղաքականութեան։ Զը. րանսական զեւպան Պ. Բօնսթանի Պօլիսէն յանկար. ծական մեկնումը տակնուվրայ ըրած է Պալատը։ Ար. տաքին Գործոց նախարարը, Թէվֆիք փաշա, Բարիզի օսմանեան զեւպանատան քարտուղարին միջոցաւ տար. տամ ապահովութիւններ առլ կը ջանայ Պ. Տէլքաեին երկու ֆրանսացի պանքէրներու աննկիւններուն մասին

և կը խնդրէ զհւանազիտական յարաբերութիւններու վերջոյսը, խնդրոյն վերջնական կարգադրութեանը մասին կարենալ բանակցելու համար: Միւս կողմէ, թրքական պաշտօնական շրջանակներուն մէջ զիւսնագիտական յարաբերութեանց խզման պատասխանատուութիւնը Պ. Գօնօթանի վրայ կը ձգուի: Իրողութիւնները խեղաթիւրելու համար, ինչ որ ալ բլլան Գրան ու սուլթանին ձեռք առած միջոցները՝ Ֆրանսական կառավարութիւնը որոշած է մինչև ծայրը երթալ և իր ազդեցութիւնը յարգել տալ ամէն գնով: Այս վճռական օտարազուցի վերջին առջիկ՝ սուլթանը շուրճած ու խելայեղ մարզու քայլեր կ'առնէ: Հեռագիրները ծանուցին որ սուլթանը Տաճկաստանի բոլոր լատին միսիօնարութիւններու և վանքերու համար եկած ապրանքներէն հարիւրին հինգ մաքսատուրք պահանջել կը սպասնայ ու կ'արգիլէ ո՛ր և է Ֆրանսական-կրօնական հաստատութեան նոր հիմնարկում թիւրքիոյ մէջ, առանց կայսերական իրատէի: Ասոր փոխարէն Բարիզի Ֆրանսական ոստիկանութիւնը հրահանգ օտարացած է՝ սուլթանի խնդրանքովը երիտասարդ թիւրքերու վրայ կատարուած հսկողութիւնը զազրեցնել: Թիւրքիոյ յաւակնութիւններուն դէմ միջոցներ ձեռք առնելու համար Ֆրանսական նախարարութիւնը մասնաւոր նիստ մը ընելով՝ հեռագրական գործակալութիւններուն հաղորդեց նօթա մը, որմէ կ'երևի որ Պ. Տէլքասէ Պօլսոյ Ֆրանսական զեպանատունէն հետեւեալ խնդիրներու լուծումը պահանջած է զանազան ժամանակներու մէջ.

1. Կայսերական իրատէով քարափի ընկերութեան շնորհուած իրաւունքներուն ազատ կիրարկումին դէմ յարուցուած դժուարութիւններուն բարձումը:
 2. Լոտանտօ և Թիւպինիի ի նպաստ օսմանեան գատարանի մը առջև տրուած վճիռին գործադրութիւնը: Այս վճիռը Ֆրանսական զեպանին ու թրքական Արտաքին Գործոց նախարարին կողմէ սուլթանին ներկայացուած ու անոր հաւանութիւնը առնուած էր:
- Այս խոստումներուն չյարգուիլն էր որ պատճառեղաւ Պ. Գօնօթանի Ֆրանսական կառավարութենէն հտկանչուելուն: Բարիզի օսմանեան զեպան Միւնիխ պէյ հրաման ստացաւ սուլթանէն Զուիցերիա սպասել, մինչև այս խնդրոյն կարգադրութիւնը: Միւս կողմէն Ֆրանսական կառավարութիւնը ազգարարեց Միւնիխ պէյին որ իր Բարիզ ներկայութիւնը աւելորդ էր ա՛լ ևս: Հետևապէս թրքական զեպանը իր բարտաբ օրինաւորապէս օտարացած ըսել է: Լոտանտի մեծ թերթերը կը նկատեն որ ասիկա քայլ մը հաւանել կը նշանակէ դէպի վերջնական խզումը, որուն յիմարաբար դիմել կերևի Երլտըզի գազանը: Սուլթան Համիտ կ'երևակայէ թերևօ, որ այս օրերս Ֆրանսան Ջարին այցելութեամբը զբաղած ըլլալով՝ չպիտի կրնայ կորովի ու անմիջական միջոցներ ձեռք առնել, որոնք միայն պիտի կրնան Ֆրանսական

ազդեցութիւնը վերահաստատել թիւրքիոյ մէջ: Ֆրանսական քապիտէլին կողմէ հեռագրական գործակալութեանց հաղորդած վերջին նօթան սակայն կը քողարկէ շատ լուրջ ու վճռական որոշումներ, զոր Ֆրանսան պիտի զիտնայ գործադրել, եթէ սուլթանը իր նենգամիտ ձգձգումները յամառի շարունակել: Այս միջոցներէն խուսափելու համար պէտք է որ սուլթանը անդի տայ այնքան շուտ, որքան իր խառնուածքը կը ներէ իրեն:

Սուլթան Համիտ նկարագրով ու վարժութեամբ ձրգը ձրգուներու արհեստին հին վարպետն է: Կը շանայ այս առթիւ ալ դիմել իր սովորական ու նախընտրելի միջոցին: Բայց Պ. Տէլքասէ ասանկ ասիական մաքիափէլութիւններէ խաբուող մարդ չէ և իր չափաւորութեան կը միացնէ աննկուն հաստատամտութիւն մը: Ինք ամբողջովին համաձայն է Գօնօթանի ընթացքին և վերոյիշեալ նօթան կը ցուցնէ, որ իր քապիտէլի ընկերները իրեն կաշակցին ամէն կերպով:

Իր պահանջները գոհացնելու համար Ֆրանսայի ձեռք առած միջոցները պետութիւններու հաւանութեան ու բարոյական աջակցութեան կարծանանան: Երլտըզի Դիւահարը եթէ տեղի չտայ գործը գէշ է, բայց ամէն մարդ պիտէ որ Ապտիւլ Համիտ այս կարգի շնորհալի զիջումներու անվախ չէ:

Քանի մը օր առաջ Ֆրանսական հեռագրական գործակալութիւն մը հրատարակեց թէ սուլթանը իր բարեկամ Վիլհելմ կայսեր դիմած է օգնութիւն խնդրելու: Դուրը կաշխատի Գերմանիոյ ընդունիլ տալ Ֆրանսոթրքական դժուարութեան լուծման իրաւարարի դերը, թիւրք կ'ըսէ այս առթիւ թէ պատճառներ ունի հաւատալու որ Գերմանիա բարոյապէս պիտի աջակցի Ֆրանսայի քան թէ թիւրքիոյ, եւ թէ սուլթան Համիտ կարող չէ հասկնալ ասիկա: Թէև մտաւորական օուր կարողութեան համբաւ ունի սուլթանը, բայց պետութեանց զիւսնագիտական յարաբերութիւններուն մասին իր գիտութիւնը սահմանափակ է և ամէն խնդիր արեւելցի մը նեղ տեսակէտէն կը դատէ:

Սուլթանը մեծ կարեւորութիւն կ'ընծայէ Գերմանիոյ կայսեր Պօլիս տուած այցելութիւններուն եւ կը չափազանցէ անոնց նշանակութիւնը: Հայկական ջարդերու ժամանակ Վիլհելմ կայսեր Երոպական համբաւը թեւէն զուրս մնալը սուլթանը կը քաշալերէ հաւատալ որ նպատակաւոր դիրք մը պիտի բանէ նաև այս խնդրին մէջ թիւրքիոյ նկատմամբ: Բայց, կ'ըսէ Թայնզ, «սուլթանը թող զիտնայ թէ չկայ պետութիւն մը որ ուզէ իր մատուցել իսկ օգնել թիւրքիոյ այն դժուարութիւններուն մէջ ուր կառաջնորդին զայն՝ կառավարողներու յիմարութիւնն ու անպարկեշտութիւնը»:

Իր հետեւած կորովայի ընթացքին համար, Ֆրանսան ոչ միայն պետութեանց հաւանութիւնը այլ և Երօպայի հանրային կարծիքն ունի իրեն հետ: Քաղաքա-

կան շրջանակներու մէջ մեծ գոհունակութիւն կը պատ-
ճառեն Ֆրանսայի ձեռք առած միջոցները: Սուլթանին
այլանդակ յանդգնութիւններուն օանձահարուժը շատոնց
ի վեր պէտք մը գարձած էր Եւրոպայի համար:

Թայագին Վիէնայի թղթակիցը դիտել կուտայ որ
Եւրոպայ քեզի Բանտարկեալին անբնական յանդգնու-
թիւնը կըսիսի Հայկական ջարդերէն ի վեր, որոնց բը-
նական եւ տրամաբանական հետեանքը եղաւ համիս-
լամութեան գաղափարին տարածման մշակումը:

Թրքո-հելլենական պատերազմին յաղթական ելքը
մեծապէս խրախուսեց Ապտիւլ Համիտը իր համիսլա-
մութեան երազին մէջ: Ասիկա առիթ մը եղաւ
սուլթանին իր տիեզերական ազդեցութիւնը ճանչցնելու
մահմետական աշխարհին և զայն համոզելու որ եթէ եւ-
րոպական պետութիւնները չմիջամտեցին ի նպաստ հելլէն
կեանքներու՝ պատճառը այն էր որ չի համարձակեցան
իրեն զէմ ելլելու:

Համիտլամութեան շարժումը նոր գարկ մը ստացաւ
Վիլհելմ կայսեր Պօլիս այցելութիւնովը: Եւրոպայի թա-
գակիրներու հզօրագոյնին կողմէն փատիշահին տրուած
այս այցելութիւնը յարգանքի ու հպատակութեան նշան
մը նկատուեցաւ մահմետական աշխարհին մէջ:

Ընդունելով իսկ թէ Չինաստանի մահմետական ա-
ռաքելութեան գաղափարը Պօլիս յղացուած չէր, այլ Եւ-
րոպայի մայրաքաղաքներէն մէկին մէջ, անուրանալի է
որ այդ իրողութիւնը ինքնին հզօր ազդեցութիւն մը ա-
ռաջ բերաւ ի նպաստ սուլթանի հեղինակութեան իսլա-
մական աշխարհին մէջ: Սուլթանը անձնապէս ամբողջովին
գրաւուած է համիսլամութեան համայնածախ գաղափա-
րովը: Հետեապէս այն կառավարութիւնները որոնք իրենց
գերիշխանութեան տակ մահմետական հպատակներ ու-
նին մեծ գոհունակութեամբ կը դիտեն Ֆրանսայի հետե-
ւած ազդու ընթացքը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Օրուան նորութիւնը ֆրանսական դեսպանին Բարիզ
կանչուիլն է: Ֆրանք-թիւրք յարաբերութեանց խզման
առթիւ զանազան տարաձայնութիւններ կը շրջին հաս:

Թիւրք կառավարութիւնը ամէն միջոցի կը դիմէ
խնդրոյն կարեւորութիւնը նուազեցնելու և անկէ առաջ
եկած սպաւորութիւնը մեղմելու համար: Սուլթանը շատ
կը վախնայ ֆրանսական կառավարութեան այն սպառ-
նալիքէն, որով կը յայտարարէ Երիտասարդ Թիւրքերուն

ու հայ լեղափոխականներուն բրօքականտի ազատ առ-
պարէզ տալ Բարիզի մէջ: Լաւատեղեակ շրջանակներու
մէջ տիրող կարծիքը այն է թէ, սուլթանը, ինչպէս իր
սովորութիւնն է, խնդիրը ծայրայեղութեան մղելէ ետքը,
վերջապէս պիտի ստիպուի ֆրանսական պահանջները
գոհացնել:

* *

Գաւառներու կացութիւնը հետզհետէ կը ծանրանայ,
Ապտիւլ Համիտ իր հայաշինջ ծրագիրը յամառօրէն ու
անարգել կը գործադրէ: Այս միջոցիս Մուշ և Սասունն են
նորէն որ աղէտներու թատրը կը ներկայացնեն: Ման-
րամասնութիւններ կը պակօին տակաւին, բայց պաշ-
տօնական աղբիւրներէ ու մասնաւորներու հասած նա-
մակներէն կերևի որ բազմաթիւ Հայեր ջարդուած, շատ
մը գիւղեր թալլուած և կիներ բռնաբարուած են:

Թիւպիսիի, Լորանտօի աննելիքներուն պատճառած
տագնապին հակահարուածը իր հետեանքը ունեցաւ հայ
և թիւրք գիւղացիին վրայ: Արդէն իսկ ծայրայեղ քրք-
առտարեան հասած գառառացիներու մէջ տոռքերը
արտակարգ ու վայրագ խստաբեւեմ կը պահանջուին:
Խեղճ գիւղացիք չեն կրնար հարկահաւաք ոստիկան
զինուորներու ամէն կամայականութիւններուն գոհացում
տալ: Տուրքերու անմիջական վճարումը անկարելի է
իրենց համար. բայց վայրենի ու անողոք ոստիկանները
խօսք մտիկ չեն ըներ, գիւղացիին յետին չքաւարութիւնը
իրենց համար նշանակութիւն չունի: Տան մը մէջ ինչ
որ գան են, ընտանիքին օրապահէիլը հայթայթող միջոց
— եզ, սայլ, կարասի ու անկողին — շուկայ կը փոխադրեն
ու կը ծախեն: Գործին է՛ն եղբրական կողմը այն է որ, երբ
գիւղացին պահանջուած տուրքերը վճարելու բացարձակ
անկարողութեան մէջ է, այսինքն երբ ո՛չ եզ, ո՛չ սայլ,
ո՛չ կարասի ունի, այն պարագային կօպիտ ժանտարմները
անոր ազգականին կամ զրացիին ո և է մէկ ունեցածը
բռնի կը գրաւեն ու կը ծախեն չը մոռնալով սա խրատն
ալ տալ « զուք վերջը կրնաք մէկզմէկու փոխարինել: »

ԼՈՒՐԵՐ

ՀՆՆՆՆՆՆՆՆ

Միևնիթ ՊէՅ ԲԱՐԻԶԷՆ ՎՈՆՏՈՒԱՄ. Սուրբանի
գահակալտարեան տարեդարձին առթիւ, Բարիզի դեսպան
Միանիթ պէյ, մոռնալով ներկայ կացութիւնը, դեսպա-
նատուներ լուսավառելու ու խնամք մը տալու յանդգնու-
թիւնը ունեցած էր: Պ. Տէրքասէ նամակով մը գարմանքը
յայտնելով թիւրք դեսպանին այս տարօրինակ ընթաց-
քին վրայ, հրատարեց գիւրք որ անմիջապէս Բարիզը
բողոք:

ՄԻԻՆԻՐ ՊԷՅ ԻՐ ՊԱՐՏՔԵՐԸ ՉԻ ՎՃԱՐՆԵՐ.
Սոսրանին ներկայացնողիւր Բարիգէն Պրիստի գնաց
սոսրանին 120 ոսկի ստացաւ իր օրելին հաշիւ-
ները կարգադրելու և Պօլիս վերադառնալու ձանապար-
հածախսին հաւար: Միշնիւր պէյ Բարիգէն մեկնած ա-
տենը դեսպանատան դիզուած պարտքերէն եւ ոչ մէկը
վճարած է: Մասնաւորապէս մտցած է դեսպանատան
պաշտօնեաներուն վեցամսուան յետևեալ բոշակներուն
հաշիւը կարգադրել:

**ՍՈՒԼԹԱՆԻՆ ԲԱՐԻՉԵԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ՋՆՁՈՒՄ.** Ֆրանսական կառավարութիւնը որոշեց
Երիտասարդ Թիւրքերը ոչ հայ յեղափոխականները
յրտեսելու պաշտօնով կազմակերպուած ոստիկանութիւնը
չնշել և յրտեսելու արտաքսել Ֆրանսայէն:

**ՍՈՒԼԹԱՆԻՆ ԽՆԴԻՐՔԸ ԻՐ ԲԱՐԵԿԿԱՄԷՆ ՄԵՐ-
ԺՈՒՄ.** Ֆրանքո-թիւրք վեճին առթիւ Վիլհելմ կայ-
սեր միջամտութիւնը խնդրած էր սոսրանը: Գերման
դեսպանը երկուշաբթի իր կայսեր մերժողական պատաս-
խանք հաղորդեց Երևոյց:

ԱՆՕԳՈՒՑ ԺԻԳ ՄԸ. Արտաքին Գործոց նախա-
րար Թեմիֆիզ փաշա իր բնակարանը հրաւիրեց Պ. Պարսը
որ Բարիգէն ստացած հրահանգին համաձայն մերժեց այդ
հրահարը:

ԱԻԱԶԱԿՆԵՐԷ ՎԵՐՑՈՒՄ. Երիտասարդ ամե-
րիկոսնի մը որ միսիոնարութեան պաշտօն ունէր Սե-
լանիկի վիլայէթին մէջ, Ճորձապաշայի մօտերը առա-
գակներէ առևանգուեցաւ:

ԹԻԻՐԻ ԿԸՂԻՆԵՐԸ ՊԵՏԻ ԳՐԱՒՈՒԻՆ. Ֆրան-
սական կառավարութիւնը Արշիպեղազոսի կղզիներէն
քանի մը հատ գրասեղ որոշած է, եթէ սոսրանը տեղի
չի տայ:

**ՄՈՒՇ ԵՒ ՍԱՍՈՒՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՏԱԳՆԱ-
ՊԱԼԻՑ.** Էրզրումէն եւ Խարթերդէն երկու գորարածին
հրաման ստացան բնթանօրներով դէպի Մոսք և Սա-
սուն շտապել: Պօլսոյ ամգլիական դեսպանը Դրան ոչ
շաղրտութիւնը հրահարեց Սասնոյ ոչ Մոսքի նոր աղիտ-
ներուն վրայ, և խորհուրդ տուաւ սոսրանին այս
վտանգաւոր կացութեան վերջ մը տալ յակնուն բիւրք
կառավարութեան շահերուն:

ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՉ Պ. ՄԱՔՔԻՆԼԻԻ ՎՐԱՅ.
Սեփրիկայի Միացեալ Նահանգաց հանրապետութեան
նախագահը, Պ. Մաքքիճի անհշխատական մը թեմոյ-
վերի երկու գնդակ ստացաւ, Պիեֆալօի ցոցահանդէսը
այցելած պահուն: Նախագահին վիճակը յոռահատա-
կան չի նկատուիր:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Յեղափոխութիւնը շահագործելու և մնտոելու ա՛լ ան-
կարող վիճակի մը մէջ դրուած քանի մը տխուր ան-
հատներ՝ իրագութիւնները գիտակցարար խեղաթիւրելով՝
կը յուսան վարկաբեկել Նոր Կեանքը:

Չննց ուզեր պղծել՝ նուիրական Գաղափարի մը
նուիրուած այս Լիբրը, զբաղելով հոս այդ ինկած ու
աղտոտ տիպարներուն քստմեղի հոգեբանութեամբը:
Ասոր պէտք չունի արդէն Հնչական Կուսակցութիւնը՝
դիմակաթափ ընելու ու իրենց բովանդակ ապակալու-
թեամբը երևան հանելու համար այդ մութի ու տիղմի
մէջ պահուրտող օտուները:

Միամիտներուն համար սակայն, որոնք թերևս վըր-
դովուն այդ նենգաւոր խեղաթիւրումներէն ու սպրդուը-
ներէն, միանգամ ընդ միշտ կը յայտարարենք թէ Նոր
Կեանքի խմբագրութիւնը անհատի մը վերագրելը լիբր
ու շնական սուտ մըն է, թէ Նոր Կեանքը ամբողջապէս
Հնչական Կուսակցութեան մտածումն ու հայեացքները
կը թարգմանէ, թէ Նոր Կեանքի մէջ երեցած իւրաքանչիւր
յօդուածի միակ պատասխանատուն Հնչական Կուսակ-
ցութեան Կեդրոնական Վարչութիւնն է:

ՆՈՐ ՀԱՍՅԷ

«ՆՈՐ ԿԵԱՆՔ»-ի վերաբերեալ նամակ ո՛ր բաժ-
նեկին զրկել հետեւեալ հասցէին.

REDACTION DU "NOR-GUIANK,"
27, BATHURST GARDENS,
KENSAL RISE,
(ENGLAND.) LONDON, N. W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին-
ու 15ին: Բաժնեկինն է Եւրոպայի համար տարեկան 10
եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2
ու վեցամսեայ 1 տոլար: